



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԺ. Ա. ԲՈՒԺԱԽԵՂԵԱՆ



ՌՈՒԴՈԼՓ
ՎԻՐԵՍՈՎ

619.
Կ - 68F.

11.03.2013

三

61q.
4-68f.

40

20 JUL 2010

68

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԿԱՆ ՎԻՐԻԽՈՎ

500-16



Ա-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՏՎԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 21 Апрѣля 1904 года.

„Пушкинская Скоропечатня.“ Лештуковъ, 4·



ՊՈՒԳՈՂԻ ՎԻՄԽՈՎ.

Երևելի գիտնական և քաղաքական գործիչ Ռ.
Արքսովիր գերմանացի էր. վաճառականի որդի: Նա
ծնւել է 1821 թ. Պամերանիալի Շխվելբէյն փոքրիկ
քաղաքում:

Նրա ամբողջ կեանքը աշխատանքով անցաւ:
Նա ձեռք բերեց նշանաւոր մարդու, դասախոսի և
զիտնականի հոչակ, բազմաթիւ աշակերտներ գրա-
ւելով աշխարհի ամեն կողմերից:

Նա բացարեց մի շարք հիւանդութիւնների
ծագումն ու էութիւնը: Նշանաւոր աշխատութիւն-
ներ թողեց մարդաբանութեան և նախապատմական
հնագիտութեան վերաբերեալ. մինչեւ իսկ ինքն
անձամբ պեղումներ էր կատարում և այդ նպատակով
ճամբորդում էր Եղիպտոսում ու Կովկասում:

Արքսովիի գործունէութեան բազմաւեսակու-
թիւնը ուղղակի զարմանալի է: Նա մի կողմից հան-
րամատչելի դասախոսութիւններ է կարդում բան-
ւորներին, միւս կողմից հրատարակում է հանրա-
մատչելի գիտական դասախոսութիւնների ժողովա-
ծու, որտեղ ինքը մասնակցում է իբրև հեղինակ՝
գրելով բազմազան նիւթերի մասին:

Իբրև քաղաքական դործիչ՝ Վիրխովը հետեւողական և եռանդուն ազատամիտ էր և «դերձանական ազատախոհ կուսակցութեան» հիմնալիրներից մէկը։ Նա «կուլտուրական կոիւ» էր մզում կղերականութեան, միլիտարիզմի և ուրիշ խաւար ուժերի գէմ, որոնք խանգարում էին Գերմանիայի լառաջիմութեանը։ Նա հռչակաւոր Բիսմարկի թունդ հակառակորդն էր, որը և մի անգամ Վիրխովին հրաւիրեց մենամարտութեան, բայց մարդկութեան բաղդից՝ մենամարտութիւնը զլուխ չեկաւ։

Դա նոյն երկելի Բիսմարկն էր, որ յաղթեց ֆրանսիայիներին և այնպիսի մեծութեան հասցըց Գերմանիան։ Նա, որից վախենում էր տմբողջ աշխարհը, որը պետութիւնից 50 միլիոն ռուբլի պահանջեց լեհացիներին գերմանացնելու համար, ծրադրելով գնել այն հողերը, ուր ապրում էին նրանք գերմանական լծի տակ։ Այդ կոիւր շարունակում է մինչև այսօր։ Երկու կողմ բանկ է հիմնել կեանքի և մահւան կոիւ մզելու։

Վիրխովը մինչև անգամ Բերլինի քաղաքային խորհրդի անդամ էր և շատ բան է արել քաղաքի առողջական դրութիւնը բարելաւելու համար։

Մի ֆրանսիայի զիտնական այնքան նիշտ ու լաւ է բնորոշում անմահ Վիրխովին, որ մենք օդտակար ենք համարում նրա խօսքերը մէջ բերել։ «Վիրխովը իր ամբողջ կեանքում դործում էր չափազանց լայն ասպարիզի վրայ. նա դործում էր անսպառ արգասաւորութեամբ և անդալրում լարու-

մով, դործում էր արտազրելով, հետազօտելով, հաստատելով, կարգաւորելով, ուղղելով ու ընդհանրացնելով։

Վիրխովի անունը, որ կապւած է անհամար վիտողութիւնների, փորձերի և տեսական հայեացքների հետ, յայտնի է անբաղչ աշխարհին. նրան համարում են նոր ուղիներ յարտարապող, յեղաշրջում առաջ բերող և ամեն ինչ կարգի վնող ու կապակցող խելքի տեր մարդ։

Որպէս ուսուցիչ նա ոչ միայն հազարաւոր մարդկանց օգասակար զիտելիքներ ու առողջ հայեացքներ է հազորգել, այլ և յարութիւն է առել իր բաղմաթիւ աշակերանների ու սրանց աշակերանների աշխատանքներում և զիտութիւնը լցրել է բեղմնաւորող սաղմերով ազգելով մերանքի նման մշտնեսապէս։

Բոլոր լուսաւոր երկիրներում ու քաղաքներում տօնեցին նրա 80-ամեակը. իսկ 1902 թ. մէջ մարզը չկար այլեւ։ Մարմինը մեռաւ, բայց նորասղին ապրում է և կ'ապրի մինչև աշխարհի վերջը։ Նա ամբողջ մարդկութեան պարծանքն է. նա տասնիններորդ դարի մարդկային հանճարի գերբնական արդիւնքն էր։

Այն ընտրեալ բժիշկների ու բնաբորձների փոքրիկ շրջանում, որոնց դործունէութիւնը չի սահմանափակում միայն իրանց նեղ մասնազիտութեան մէջ, այլ վերաբերում է մարդկային զիտութեան բազմատեսակ ոլորտներին, որոնց ազգեցութիւնը երևում է ոչ միայն զուտ զիտութեան որոշ շրջա-

նում, այլ իրանց հայրենիքի հասարակական ու քաղաքական կեանքում, ուր անջնջելի հետքեր են թողել—այդ մարդկանց շրջանում ամենապատւառը տեղերից մէկն անկասկած Վիրխովին է պատկանում:

Այդ տեսակ մարդկանց անունը, ինչպէս ասում է մի բժիշկ, դրոշմւում է ոսկէ տառերով ոչ միայն բնաբանութեան էջերում, այլ և մարդկալին կենսակրթութեան պատմութեան մէջ, նրանց փառքը հնում է ոչ միայն իրանց հայրենի ստհմաններում, թանգ է ոչ միայն իրանց ազգութեան համար, տարածում է ոչ միայն իրանց մայրենի լեզվի աշխարհագրական սահմաններում՝ այլ և ստանում է իսկապէս միջազգային բնաւորութիւն, սիրուում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, մտնում երկրազգնդի բոլոր խուլ անկիւնները, որտեղ մատչելի է արպազրական խօսքը:

Ա.

Մինչև 13 տարեկան հասակը Վիրխովիր ապրում էր մնադավայրում և սովորում էր ժողովրդական ուսումնարանում: Հետոյ նա պատրաստեց վարժարան (գիմնազիա) մտնելու համար:

Նրա վերջին ուսուցիչը տեղական եկեղեցու երկրորդ քարողին էր, որ ստիպում էր նրան թարգմանութիւններ անել ու զրել և թով չէր տալիս ոչ մի քերականական կանոն անզիր անելու: Այդ էր նրա դասատրութեան եղանակը:

Այդ բանի շնորհիւ Վիրխովիր այնքան սիրեց հին լեզուները, որ շատ անգամ թարգմանում էր և այնպիսի հատւածներ, որ նրանից չէին պահանջում: Երբ Վիրխովիր մտաւ վարժարան՝ տեսուչը այնքան զո՞ւ մնաց նրա իմացած լատիներէնից, որ այդ օրւանից դարձաւ տեսչի սիրելին ու արդպէս էլ մնաց մինչեւ վարժարանն աւարտելը:

Իսկ յունարէնի ուսուցիչը ոչ մի կերպ չէր հասկանում թէ ինչպէս կարելի է յունարէնից բան թարգմանել առանց քերականութիւնն անզիր զիտենալու. և դրա համար էլ շատ անգամ մեղադրում էր Վիրխովին համարելով խարեւալ:

Ու թէև ուսուցիչը նոյն իսկ ամենաարթուն հսկողութիւնից յետոյ չէր կարողանում որևէ ըրթուղարուած ծեռնարկ գտնել Վիրխովի ծեռքին, բայց և այնպէս մինչեւ աւարտելը շարունակում էր կասկածներով հալածել նրան:

Իսկ երբ քննութեան ժամանակ աւետարանը յունարէն կարգալիս Վիրխովիր փայտուն պատախաններ տւեց՝ յունարէնի դասատուն յայտնեց միւս բոլոր ուսուցիչներին, որոնք լաւ թւանշան էին զրել, թէ ինքը պէտք է Վիրխովի գէմ ծայն տալ, որովհետև նրան բարոյապէս հասուն չի համարում համալսարան մտնելու համար: Բարեւաղդաբար այդ առարկութիւնը անհետեանք մնաց:

Յունարէնի ուսուցչի բոլոր յարձակումները անկարող եղան համոզելու Վիրխովին, որ անպէաք է այն եղանակը, որով նրան լեզուներ է սովորեցրել իր ընտանեկան ուսուցիչը: Աւարտելուն պէս նա

առանց գժւարութեան սովորեց իտալերէն, ինչպէս նաև եբրայական լեզուն, որ պարտաւորիչ էր միայն աստւածաբան ուսանողների համար: Ըսդհանրապէս Վիրխովին հետաքրքրում էին նաև լեզուները: Վիրխովը վարժարանն աւարտեց իբրև առաջն աշակերտ և մտաւ Բերլինի ռազմա-բժշկական ճեմարանը:

Ուսանողների պարապմունքներին հսկում էր մէկը, որ ուշադիր հետեւում էր իր աշակերտների զարգացման, նկատում էր նրանց զիտական հակումները և ամեն կերպ աշխատում էր աշակցել նրանց առաջադիմութեան:

Վիրխովը չորս տարի մնաց ճեմարանում և լսեց բժշկական դիտութիւնների բոլոր պարապիր ու ոչպարտազիր դասընթացները. վերջացնելուց յետոյ պաշտպանեց իր աւարտազիրը (զիսերսացիա) և կարգւեց մի նշանաւոր պրոֆէսորի օգնական՝ դիակներ անդամնատելու գործում:

Օգնական նշանակւելը վնասական աղփեցութիւն ունեցաւ Վիրխովի յետագայ գործունէութեան վրայ. դրանով նա հնարաւորութիւն ստացաւ անկախ գիտական աշխատանքներ կատարելու:

Իբրև պրոդէկաոր (օգնական պրոֆէսորի) Վիրխովը իր առաջն քայլերից իսկ զրաւեց ուսանող երիտասարդութեան ուշադրութիւնը: Նրա շուրջը հաւաքւեց ունկնդիրների մի փոքրիկ խումբ. Վիրխովը ինքը յանախ լիշում էր այդ առաջին խմբակը, որի անդամներից ոչ մինը անհան մարդ չեղաւ:

Իսկ ինքը ել ու մուտ ունէր յայտնի գիտնականների ու բժիշկների շրջանում: Բացի այդ նամօտ ժանօթ էր Ալնոլդ Մենդելսոնի հետ, որ նշանաւոր քաղաքական գործիչ էր և Լասսալի բարեկամը: Այս մօտկութիւնը անհետեանը չմնաց Վիրխովի սոցիալ-քաղաքական հայեացըների համար:

Բ.

Եթէ մինչև այժմ Վիրխովի անունը ու գործերը յայտնի էին միայն մասնագէտներին, որովհետեւ վերաբերում էին զիտական հարցերի՝ 1848 թ. նա հոչակեւում է ամեն տեղ: Այդ թւականի նշանաւոր գէպքերը նրան քաշեցին քաղաքական ասպարէց ու դարձրին քաղաքական գործիչ ստիպեցին նրան զբաղւելու առողջաբանութեան խնդիրներով և հոչակեցին նրա անունն ու գործերը:

Բանը այսպէս էր: 1847 թ. ամառանից ըսկած Գերմանիայի արեելեան մասում՝ Սիեղիացում շատ զոհ էր տանում սովորինքը: Վարչական մարմինները սկզբում ոչ միայն միշոցներ չէին ծեռնարկում համաճարաւոկի հետ կռւելու համար՝ այլև ուղղակի լուսութեան էին տալիս իրողութիւնը:

Մամուլը, որ այն ժամանակ համեմատական ազատութիւն ունէր, սկսեց բարձր ծախով խօսել ամեն կողմ տարածուող համաճարակի մասին և կոչեր տպել ու օգնութեան հրաւիրել: Բժշկական գեղարտամենար ես իր կողմից մարդիկ ուղարկեց, ոռ տեղն ու տեղը ուսումնասիրեն համաճարակը.

սրանց թւումն էր նաև Վիրխովլի։ Դոցա նպատակն էր՝ հնար եղածին չափ հիմնաւոր ու զիտապէս ուսումնասիրել համաճարակը։

Որոշ ժամանակ անցնելուց յետոյ Վիրխովլ վերադարձաւ տուն և Գիտական բժշկաբանութեան ընկերութեան մէջ կարգաց իր անդեկազիրը այդ համաճարակի մասին։ Այս տեղեկազիրը հրատարակւելուց յետոյ ահազին փոթորիկ բարձրացաւ։

Բանից երեաց, որ Վիրխովլ չի բաւականացել այն նպատակով, որ յանձնարարել էր նրան նախարարութիւնը, այն է նեղ զիտական-բժշկական տեսակէտից միայն ուսումնասիրել համաճարակը՝ այլ նա ուշադրութեան է առել նաև պատմական, տնտեսական և առողջական պայմանները, որոնք նպաստել էին համաճարակի առաջ դալուն և այնքան արագ ու սոսկալի տարածւելուն։

Այդ մի մեղադրական ճառ էր, ինչպէս ասում է մի բժիշկ, որ Վիրխովլ կարգում էր նախարարութեան երեսին. անձնական զիտողութիւնների վրայ հիմնուած նա պարզ ներկայացնում էր այն ժանր անտեսական կացութիւնը և բարոյական ապականութիւնը, որ Սիլեղիայի գերմանացման արդիւնքն էր։

«Լեհացին երի երկերը գերմանացի ուսուցիչներ են ուղարկել, ասում է Վիրխովլ իր տեղեկազրում, ու թողել են, որ աշակերտ և ուսուցիչ փոխադարձաբար մայրէնի լեզու սովորցնեն միմեանց. և վերջի վերջոյ հետեանը այն է լինում,

որ ուսուցիչները լեհերէն են սովորում իսկ երեխաները՝ ոչինչ սրանով էլ վերջանում է բոլոր ուսումը»։ Բայցի այս՝ երկերը հեռու է մնացած բոլոր քաղաքակրթիչ ազգեցութիւններից. միակ զիրքը, որ մատչելի է ժողովրդին՝ ազօթազիրքն է։

Գործերի այս անմիտիթար զրութեան բաւական նպաստել է նաև կաթոլիկ հոգեորականութիւնը, որ ժողովրդին պահում է հոգեոր ստրկութեան մէջ։ Նպաստել են ծեասէր աստիճանաւորները, որոնք լիսին անտես են անում ժողովրդի տնտեսական վիճակը, օգնութեան չեն հասնում նրան. նոյն իսկ գերախտութեան տարիներում և ոչ մի հոգացողութիւն չունեն նրա բարեկեցութեան մասին։

Պակաս մեղաւոր չեն նաև Սիլեղիայի հարուստ կալւածատէրերը, որոնք ապրում են արտասահմանի մեծ քաղաքներում և ահազին գումարներ են մսխում, մինչդեռ կարելի էր տանը աւելի քիչ փող ծախսել և զրամը աւելի արդիւնաւոր գործադրել։

Գալով սովորինքի բժշկութեան, Վիրխովլ ասում է, որ գրա գէմ անօդուտ են բոլոր դեղերը, որ անհրաժեշտ է սոցիալական վերանորոգում և զրանով միայն կը փրկւի Սիլեղիան։

Իսկ այդ վերանորոգման էութիւնը պէտք է լինի «կատարեալ և անսահման ռամկավարութիւնը»։

Սնձիտ բան է օրէնքի և աստիճանաւորների վրայ յոյս դնելը. զրանցով շատ է պարձենում Պրուսիան (Գերմանիան). բայց չէ՞որ օրէնք ու

աստիճանաւոր կային այն ժամանակ, երբ ժողովուրդը հազարներով կոտորւում էր սովոր ու համահարակից:

Օրէնքը ոչ մի օգուտ չտւաւ, որովհետև նա զրած թուղթ էր միայն. աստիճանաւորը նոյնպէս օգուտ չբերեց, որովհետև նրա գործունէութեան հետեանքը ևս գրոտած թղթերն եղան:

Կրկնում ենք. աստիճանաւորը ցանկութիւն չունէր ու չէր կարող օգնել ժողովրդին. աղնը-ւականութիւնը կեանքը մաշում էր արտասահմանում ամենեին չհոգալով ժողովրդի կացութիւնը. իսկ զրամատէր-աղնւական կոչւած դասը Սիլեղացուն ոչ թէ մարդ էր համարում, այլ բանւոր ծեռք. ինչ վերաբերում է հոգևորականութեան՝ սա էլ թշւառ ժողովրդին «հատուցումն» էր խոստանում «երկնքում»:

Ժողովուրդն ինքը պէտք է իրան օգնի: Եւ որպէս զի չքանան այն սոսկալի պայմանները, որոնց մէջ ներկայումս գտնւում է Սիլեղիան, անհրաժեշտ է մի շատ պարզ ու թեթև բայց փորձւած ու լաւ միշոց՝ կրթութիւն իր զաւակներով՝ ազատութիւն ու բարեկեցութիւն:

Բանն այստեղ վերաբերում է ոչ թէ հարինքով հիւանդին այս կամ այն զեղերով բժշկելուն, կամ նրա սնունդը կարդի դնելուն և բնակարանն ու հագուստը ախտահանելուն՝ այլ $1\frac{1}{2}$ միլիոն ժողովրդի կենսակրթութեան, որ մեր հալրենակիցներն են և գտնւում են բարոյական ու քաղաքական զարգացման ամենաստոր աստիճանի վրայ:

Այս նկատումներով վիրխովիր պահանջում է ազգային վերակազմութիւն Սիլեղիայում: Վերին Սիլեղացիները լեզուվ, ժագումով ու սովորութիւններով լեհացիներ են. այս հանդամանքը պէտք է մեղ ուղեցոյց լինի Սիլեղիան քաղաքակրթելիս:

Իսկ եթէ ցանկանում են գերմանական ոգի մտցնել այնտեղ՝ այն ժամանակ պէտք է հիմնել լեհական գլորոցներ և այնտեղ նշանակել այն տեսակ ուսուցիչներ, որոնք հանրամարդկային նպատակների ծգտէին, իսկ հասակաւորների համար պէտք է նրանց հասկացողութեանը յարմար զրբեր հրատարակել լեհերէն և ալգակիսով օգտակար զիտելիքներ տարածել նրանց մէջ:

Պէտք է մեծ չափերով ծեռնամուխ լինել ժողովրդի կրթութեան գործին. պէտք է ստեղծել տարրական, երկրագործական և արհեստագիտական գլորոցներ. գլորոցը պէտք է բոլորովին անշատել եկեղեցուց. գասաւանդութիւնը պէտք է լինի ազատամիտ ուղղութեամբ, իսկ նրա հիմքը պէտք է կազմի զրական աշխարհայեցքը:

Այժմ ամենայարմար ժամանակն է մատող սերնդի վրայ ազգելու, որովհետև համանարակի պատճառով շատ երեխաներ որբ են մնացել ու զրկւել են բարոյական ազգեցութիւնից:

Սակայն անմահ վիրխովիր միայն գալուց սերնդների մասին չի մտածում. նա ցանկանում է և չափահանների ինքնակրթութիւն: Սրա համար նա պահանջում է որ մտցնեն գաւառական ու համայնական ինքնավարութիւն, առնեն ուղղակի և

արդար հարկեր, ոչնչացնեն բոլոր անծնական արտօնութիւնները, վերացնեն աւատական ծանր պարտաւորութիւնները, բարւոքեն երկրագործութիւնը, պարտիզանութիւնը ու անսանապահութիւնը, կարգի դնեն ճանապարհները, հիմնեն գործարաններ և այլն:

Վիրխովը առաջարկում է, որ պետութիւնը իր ձեռքն առնի չբաւորներին աշխատանքով օդնելու գործի կազմակերպութիւնը. Նա պետութեան պարտքըն է համարում հոգալ, որ ամեն բանւոր առողջապահիկ պայմաններում ապրի: Աշխատանքները կազմակերպելիս պետութիւնը պէտք է օդնականի և խորհրդատուի դեր խաղաց: Նա ոչ մի կերպ չըպէտք է արգելը լինի անծնական նախաձեռնութեան այս կամ այն աշխատանքն ընարելիս:

Անհրաժեշտ է, որ չբաւորները խմբւեն և դրանով հնարաւորութիւն ստանան կեանք վայելու և գալարեն ուրիշներին միջոց ծառայել: Մարդ պէտք է աշխատի այնքան, որ ապահովի իր ու մերձաւորների կանոնաւոր գոյութիւնը. բայց նա իր ուժերը չպէտք է վատնի դրամագլուխ դիղելու համար:

Դրամագլուխը կեանքից վայելքներ ստանալու մի տօմս է և հարկ չկայ նրա նշանակութիւնը չափաղանցելու:

Սեփականութիւն չունեցող աշխատաւորը պէտք է ընկերանալ պետութեան, դրամատէր աղնւականութեան կամ բազմաթիւ մանր սեփականատէրերի դրամագլխի հետ. և միայն այս ճանապարհով կարելի է բարւոքել սոցիալական կացութիւնը:

Դրամագլուխը ու բանւորական ոյժը պէտք է գոնէ հաւասար իրաւունքներ ունենան. յամենայն դէպրս չպէտք է թոյլ տալ, որ կենդանի ուժը ենթարկվի մեռած ուժին՝ դրամագլխին:

Վիրխով ասում է, մարդկութեան շտիր պահանջում էր, որ ես յալտնէի այն, ինչ որ ինձ համար զիտական նշմարտութիւն է. մինչդեռ նախարարութիւնը ինձ յալտնեց, որ իմ արած պահանջները, բացի մի քանի ուշագրութեան արժանի կետերից, «հասարակապետական դառանցներ» են միան:

Տեղեկագիրը այն հետևանքն ունեցաւ, որ վերին Սիլեղիայում մի քանի բուժական կետեր հիմնեցին ու բաց արին ամենահասարակ որբանոցներ, որոնք սակայն շուտով կատարեալ անկման հասան:

Գ.

Վերին Սիլեղիայում արած զիտողութիւնները Վիրխովին գարծրին արմատական և նա իր հայեցքները ամփոփեց այս խօսքերում. «Կատարեալ և անսահման ռածկալարութիւն» և գա այն ժամանակ, երբ Բերլինում յուղուում էր 1848 թ, յեղափողական շարժումը:

Նա իր ամբողջ քաղաքական գործունէութիւնը կենցրոնացրեց այն շրջանում, որին ինքն աւելի մօտ էր իբրև բժիշկ և համալսարանի անդամ: Նա պնդում էր, որ անհրաժեշտ է վերանորոգել բժշկների գասակարդը, բժշկական վարչութիւնը, հի-

ւանդների և աղքատների խնամատարութիւնը, հիւ-
ւանդանոցների կտղմութիւնը: Այս նպատակով նա
սկսում է հրատարակել մի լատուկ թերթ հրապա-
րակախօսական բնաւորութեամբ:

Հէնց առաջին առաջնորդող յօդւածում նապարզեց հետևեալ դրութիւնը. «Բժիշկները չքաւորների բնական վաստարաններն են և սոցիալական խնդիրն իր խոշոր մասով ենթարկւում է նրբանց իրաւասութեան»:

Այդ խօսքերով որոշվում է այն ողին և այն ուղղութիւնը, որով նա կռւում էր բժշկական վարչութեան գեղջումների գէմ. այլ կուկը մզելիս նա աչքի առաջ ուներ ոչ թէ բժշկների շահերը, այլ հիւանդների և չբաւորների բարիքը:

Նա համոզւած էր, որ բոլորին ճիշտ է այն
փիլիսոփայի ասածը թէ «Եթէ ընդհանրապէս հը-
նարաւոր է մարդկային ցեղը աղնաւայնել՝ ապա
զբա միջոցը միայն բժշկաբանութիւնը կարող է
ցոյց տալ»։ Նա միանդամայն հաւատացած էր, որ
երբ անհետանայ տռանձին տնհատների կամայակա-
նութիւնը հասարակական կեանքի ընթացքից և երբ
բժշկաբանութիւնը մարդաբանութեան պէս հաս-
տառուն հիմքեր ստանայ՝ այն ժամանակ բնախօսն
ու բժիկը կ'անցնեն այն իմաստունների շարքը,
որոնց վրայ լինեն ուռմ է հասարակական կարծիքը:

Նրա կարծիքով բժշկաբանութիւնը մի դիտութիւն է մարդու մասին, ուստի և ոչ մի մարդկային բան նրանից չպէտք է բաժանել:

Նա պնդում էր, թէ բաւական չէ, որ պետու-

թիւնը ամեն քաղաքացու միջոց է տալիս ընդհան-
րապէս գոյութիւն պահպանելու. նա պահանջում
էր, որ պետութիւնը օգնութեան հասնի ամեն քա-
ղաքացու, որի բանւորական ոչքը անբաւարար է
իր գոյութիւնը ապահովելուն:

Պետութիւնը պարտաւոր է ամեն քաքաքացու
այնքան օգնելու, որ կարողանայ առողջապահիկ
կեանք ունենալ: Այդ ուղղակի բղխում է պետու-
թեան ըմբռնումից, բստորում՝ պետութիւնը ա-
մենքի բարոյական միութիւն է: ամենքի համերաշխ
ու փոխազարծ պարտաւորութիւն ամենքի համար,
ուստի չափազանց անկարգ բան է առանձին ան-
հատների բրիստոնէական բարեգործութիւնով փո-
խարինել ընդհանուրից պարտականութեան կատա-
րելու:

Ամենքն իրաւունք ունեն պետութիւնից պահանջելու, որ սեփականութիւնը ապահով լինի. միանդամայն իրաւունք ունեն պահանջելու նաև մարմնի ապահովութիւն, որպինետեւ այդ ամենազլիաւոր ու ամենաբռնական սեփականութիւնն է:

Եթէ պետութիւնը թոյլ է տալիս, որ այս
կամ այն հանգամանքների և պայմանների շնորհիւ
եր բաղաքացիների գրութիւննը այնքան վատանայ,
որ սովածահ լինելու վտանգին ենթարկւեն՝ ապա
նա ոչ մի բանաւոր իրաւունք չունի պետութիւն
համարելու, և ոչ մի բարոյական հիմունք անծի և
դոյքի անձեռնմխութիւն պահանջելու։

թարեկեցութեան հիմքն եւ առաջըստթիւնն ու կրթութիւնը, ուստի պեսառութեան Եղողով լինելու



է որքան կարելի է շատ կրթութիւն ու առողջութիւն ստեղծել ու պահպանել. իսկ այդ նպատասակին նա կարող է հասնել կազմակերպելով աղգային կրթութիւնը ու հասարակական առողջապահութիւն:

Այս է պատճառը, որ Վիրխովը այնքան շատ էր կանգ առնում հասարակական առողջապահութեան հարցերի վրայ: Առանձնապէս նա մեծ ուշադրութիւն էր դարձնում համաճարակների վրայ, որովհետև նրա կարծիքով համաճարակը նոյնն է, ինչ որ նախազգուշացնող աղիւսակները (օրինակ՝ երբ ամեն օր կարդում ենք թէ այս ինչ քաղաքում կամ զիւղում այսքան հիւանդ է մեռել բզացաւից, հարինքից, քութէշից և այլն), որոնց նայելով՝ ինչպէս պետական մարդիկ, այնպէս էլ ամեն մի կրթւած անհատ, կարող է նկատել թէ ժողովրդի կեանքում առաջ են եկել ինչ որ փոփոխութիւններ, որոնց չի կարող ուշադրութեան չառնել նոյն իսկ ամենաանհոգ քաղաքականութիւնը:

Վիրխովը պահանջուած է Պրուսիայում հիմնել հասարակական առողջապահութեան ու կրթութեան նախարարութիւն. այս միացումը նա համարում է բնական և լիովին համապատասխան զիտութեան ու գործնական կեանքի շահերին:

Գործը պէտք է կազմակերպի յատուկ այդ նպատակով հրաւիրւած մի համագումար, որի անդամները պէտք է լինեն հասարակական առողջապահութիւնը վերանորոգելուն ձեռնհաս անձեր: Ամեն տեղ պէտք է մտցնել ընտրողական սկզբունքը, բո-

լոր վարչական-բժշկական պաշտօնները պէտք է մըրցումով բաժանել, այսինքն պէտք է տալ այն մարդկանց, որոնք ամենից լաւ և ամենից շատ են աշխատում իբրև բժիշկ ու վարիչ:

Զքաւոր հիւանդները ու ինւալիդները պէտք է պահեն պետական հաշւով: Հասարակական առողջապահութիւնը պէտք է աչալրջութեամբ հետեւի հասարակական կրթութեանը: Ոչ միայն երեխաների մարմնական կրթութեանը, մարմնամարզութիւնը և դասերի թիւն ու ժամանակը՝ այլ մինչեւ անդամ գասաւանդութիւնը պէտք է ենթարկեն բժշկական հսկողութեան: Նա պահանջում է, որ դպրոցներում աշակերտներին ժանօթացնեն տարրական փահրիզպահութեան ու նախազգուշական միջոցների հետ:

Ոչ պակաս էական վերանորոգումներ է պահանջում Վիրխովը նաև բժշկական կրթութեան զործում: Նա այն կարծիքին է, որ համալսարանի կոչումն է նպատել ժողովրդի փիլիսոփիայական զարգացմանը և տարածել ընդհանուր կրթութիւն: Համալսարանը նրա համար չէ, որ արտադրի կամագուրկ մանագէտները դատաւոր, բժիշկ ու մեքենագէտ վարժեցնելու տեղ չէ այն. ամենքն ընդհանրապէս պէտք է ամենալայն զարգացում ունենան:

Ուսանողները համալսարանում լսելու համար փող չպէտք է վճարեն. ով ընդդունակութիւններ ունի բժշկաբանութեան՝ պէտք է պետութեան հաշւով ուսում առնի:

Ասեն աւելորդ է, որ ինչպէս այս վերանորոգումների ծրագրիները, այնպէս էլ Սիլեղիալից հա-

զորդած տեղեկութիւնները մեծ դժգոհութիւն առաջ բերին. այդ դժգոհութիւնը դարձաւ մի փոթորիկ, երբ Վիրխովիլը զիտական բժշկաբանութեան ընկերութեան տարեկան նիստին կարգաց իրնշանաւոր տեղեկադիրը «1848 թ. համաճարակը» վերնադրով:

Դ.

Այս անմեղ վերնադրի տակ գտնւում էր ամբողջ լեզափոխական շարժման գնահատութիւնը, որ 1848 թ. սկզբին սոսկալի ուժով բռնեց ողջ Գերմանիան և վերջացաւ յետադէմ շարժման կատարեալ յաղթանակով: Նա այստեղ ցոյց է տալիս այն աչքի ընկնող դերը, որ խաղացին մի քանի բժիշկներ Գերմանիայում ու ֆրանսիայում:

«Միթէ՞ այս ամբողջ շարժումը զուտ մարդկային բնաւորութիւն չուներ, միթէ՞ նրա հիմքերը (արդարութիւն, սեր, եղբայրութիւն, ազատութիւն) բաւականաչափ բարուական ու բնական չէին, որ կարողանային պատրաստի հող գտնել նաև ուրիշ քաղաքակիրթ ժողովրդի մէջ. միթէ՞ բանք կուլտուրայի ամենապարզ ու ընդհանուր հարցերին չէր վերաբերում:

Դեռ համաշխարային պատմութիւնը այդպիսի մի լայն, խոր ու արագ շարժում չէր տեսել, դեռ ոչ մի անգամ հասարակութիւնը այդպէս ակներեն չէր յայտնել իր համակրանքը դէպի յեղաշրջումը, որը հանդիսանում էր իբրև սկիզբ հասարակութեան կատարեալ վերակազմութեան:

Շատ ու շատ ցաւալի է, որ այդ շարժման ամենալաւ մասը ոչնչացրին: Մի քանիսը խօսում են յետազիմութեան, միւսները հասարակապետութեան, իսկ ուրիշները ժողովրդի տհասութիւնն մասին. այս ամենի մէջ մի փոքր նշմարտութիւն կայ, բայց այդտեղ չէ ամբողջ նշմարտութիւնը:

Նրանք հանրապետութիւնից չէին վախենալ, չէին ենիւարկւի յետազիմութեան և առաջ չէին բերի ժողովրդի տհասութիւնը, — եթէ իրանք ոչնչութիւն չլինէին:

Հոգեկան հիւանդների նման իրանցից դուրս էին որոնում այն, ինչ որ իրանց ներսն էր գտնւում. իրանք իրանց խարելով՝ արտաքին արգելքներ էին տեսնում ամեն տեղ և ընկան հոգեկան հիւանդների դրութեան մէջ:

Իւրաքանչիւր համաճարակ՝ մարմնական լինի թէ հոգեկան մեղ ցոյց է տալիս, որ ժողովրդի կեանքը գտնւում է անորմալ պայմաններում և մեր զործը լինելու է — ճանաչել այդ անորմալութիւնը և ցոյց տալ պետական զործիներին, թէ անհրաժեշտ է վերացնել այն:

Խոկ եթէ մէնք կարող ենք համաճարակը անմիշապէս վերացնել, գոնէ պարտաւոր ենք ցոյց տալու այն միջոցները, որոնցով կարելի է հիւանդութեանք բարեկազող դնթացը տալ»:

Ահա Վիրխովի նշմարիտ որ՝ ոսկի մտքերը:

Ֆրանսիական լեզափոխական շարժման պատճառը, որ տարածւեց և բռնեց ամբողջ Եւրոպան, Վիրխովի համարում է մասամբ գերման փիլի-

սովայութեան և կիւտերի աղղեցութեան հետեանք:

Վիրխովի կարծիքով հոգեկան համաճարակների ժամանակ մենք նկատում ենք միենոյն երեք ասափինները, ինչ որ անհայի հոգեկան հիւանդութեան ժամանակ:

Հիւանդութիւնը սկսւում է մելամաղձու դրութիւնից և զնալով հասնուամ կատաղութեան, սրան յաջորդում է վհատութիւն, որ աստիճանաբար զնալով վերջանում է կամ առողջանալով, կամ բթացումով կամ թէ նորից դառնում է կատաղութիւն:

Այդ ժամանակ Գերմանիան դանւում էր վհատ դրութեան մէջ, ուստի Վիրխովը խորհուրդ է տալիս բոլոր խելացի մարդկանց անմիջապէս խմբւել ու միաբան գործ զնել բոլոր հնարներն ու միջոցները՝ բուժելու համար ամբոխին այդ վհատութիւնից, ներշնչելով և պատրաստելով նրան այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է այդ վհատութեանը հակարշիո ստեղծելու համար: Եւ նա մէջ է բերում մի շատ յայտնի հոգեբուժական օրէնք, ըստ որում այդ տեսակ հոգեկան հիւանդները ամենից լաւ բժշկում են՝ աննկատելի մանկավարժական աղղեցութեան ենթարկելով:

Վիրխովի քաղաքական գործունէութիւնը կասկածի ենթարկեց: Արդէն ժամանակ էին մի կերպ նրանից ազատւել, բայց դեռ չէին համարձակւում ձեռք տալ երիտասարդ զիանականին:

Շարիտէ հիւանդանոցը, որտեղ ժառախում էր Վիրխովը, մի ինչ որ պատճառով համարւում էր

անկախ բնարողական շրջան, սա ունէր 250 բնարող՝ բժիշկ, աստիճանաւոր, ծառայող: Ըստրութիւններին մասնակցում էին նաև հիւանդները: Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ այստեղ չափազանց կենդանի ժողովները հիւանդներին ուղղակի վնասում էին, որովհետեւ առանց առողջութեանը վնասելու անկարելի էր շատ անգամ 5 ժամի չափ շարունակ մնալ մարդկանցով լիքը շնչքում և ականչ դնել թեկնածուների յուղիչ ու յուղւած հառերին: Մի անգամ մինչեւ իսկ ստիպւած եղան թիկնաճառի կիսին նիստար փակելու, որովհետեւ հիւանդները լսկել էին սաստիկ հազար:

Վիրխովը բողոքեց գրա դէմ. «մենք նոյնքան հակառակ ենք, որ հիւանդանոցները քաղաքական հիմնարկութիւններ դառնան, որքան բողոքում ենք, որ նրանց գարձնում են կրօնական քարոզութիւնների օջախ: Երկուսն էլ պէտք է միանդամայն վերացնել հիւանդանոցներից»:

Վիրխովին ենթարկեցին դատի և պաշտօնից զրկեցին: սակայն քիչ յետոյ պաշտօնը նորից տւին իրան, բայց վարձի մի մասը կարեցին և զրկեցին ձրի բնակարանից հիւանդանոցում:

Այս պայմաններում՝ շարունակ արծակւելու վտանգին ենթակայ, նա չէր կարող իր դիտական գործունէութիւնը շարունակել, նոյն իսկ եթէ հրաժարւելու լինէր հասարակական ու քաղաքական բոլոր գործերից:

Նա այն բնաւորութիւններից չէր, որ կարողանար անմասնակից զիտող լինել քաղաքական պայ-

քարի. նա չէր կարող թաղւել իր աշխատանոցի անդրութեան մէջ զիտական պարապմունքներին անձնատուր, երբ դուրսը կռւում էին մարդիկ հասարակական բարօրութեան համար:

Այդ ժամանակները մի ուրիշ համալսարան (Վիւրցբուրգի) լսելով Վիրխովի տարածախութիւնների մասին նախարարութեան հետ, օգտւեց հանգամանքից և նրան պրոֆէսորի պաշտօն առաջարկեց: Վիրխովը դասախոսելու էր հիւանդ մարդու մարմանակազմութիւնից:

Դժւար էր Վիրխովի համար թերլինից հեռանալը, որտեղ այնքան զիտական աշխատանքն էր էր սկսել ու վերջացրել, որտեղ աչքի ընկնող դեր էր խաղացել հասարակական ու բաղաքական կեանքում:

Իր թերթի վերջին համարում նա «մնաս բարե»է ասում ընթերցողներին ու թերլին բաղաքին: «Այս զուր է պետութիւնից սպասել այն, ինչ որ մէնք կարող ենք ձեռք բերել պարբերական մամուլի միջոցով. այսուհետեւ մեր նապատակը պէտք է լինի մատցնել ժողովուրդի մէջ հասարակական առողջապահութեան վերաբերեալ հարցերը, արծարծել նրա շրջանում օրւաց հացի և առողջապահիկ կացութեան խնդիրները և նորանոր քարոզիչների միջոցով լայն հիմունքներ ձեռք բերել նրանց վերջնական յաղթանակի համար»:

Այն բժշկական վերանորոգութիւնը, որ մէնք աչքի առաջ ունեինք, զիտութեան և հասարակութեան վերանորոգութիւնն է միանդամայն: Մէնք

արծարծել ենք նրա սկզբունքները, որոնք իրանց համբան կը հարթեն նաև առանց այս օրդանի գոյութեան. մէնք մեր տեղն ենք փոխում միայն և ոչ թէ զործը: Ոչ մանրադէտի առաջն, ոչ հիւանդի մօտ և ոչ էլ դիակահատութեան ժամանակ ես չեմ մոռացել բարձր միաւորող սկզբունքներին ծգուելք:

Գուցէ սխալում եմ, բայց համոզւած եմ, որ երբէք չեմ կարող հրաժարւել այն մտքից թէ մարդկացին բնութիւնը մի է, ամենքն իրաւունք ունին ընդհանուր զարգացման, ամենքը պէտք է հաւասար իրաւունքներ ունենան»:

Հիմնելով բնութեան երևոյթների բազմազանութեան վրայ, ամեն երևոյթի օրէնքներն ուսումնասիրելով առանձին՝ Վիրխովը ենթադրում է, որ բնական օրէնքների համածայն՝ իւրաքանչիւր անհատական գոյութիւն իր անհատական պայմաններն ունի:

Հիւանդութիւնը բացառիկ բան չէ. հիւանդութիւնը վատ պայմաններում անցնող անհատական կեանքի արտայայտութիւնն է:

Իսկ համաճարակը մի լայտարար է, որ ցոյց է տալիս թէ մասսաների կեանքում մեծ խանդարմունքներ կան:

Վիրխովը տարբերութիւն է գնում բնական և արհեստական համաժարակների մ'չե. առաջինը պատահում է տարւայ եղանակները փոխւելիս, որոնց հետ փոխում են և ապրելու պայմանները, որովհետեւ մասսաները արհեստական միջոցներով չեն պաշտպանում իրանց այդ փոփոխութիւններից:

Արհեստական համաճարակը արդիւնք է բոլոր դասակարգերին չվերաբերող, սուտ կենսակրթութեան, նրանց մատնանիշ են անում այն պակասութիւնները, որոնք պետական կամ հասարակական վատ կազմի պառուղ են. դրա համար էլ նրանցից առաւելապէս այն դասակարգերն են վնասում, որոնք անկարող են օգտւել կենսակրթութեան բարիքներից: Յայտնի է, որ խելառութիւնը նոյնպէս կարող է համաճարակ դառնալ և աղքերի մէջ անմիտ շարժումներ մտցնել:

Միայն հոգեբուժութիւնն է, որ կարող է հարաւորութիւն տալ պատմաբանին զլուխ չկորցնելու հասարակական կարծիքի և ժողովրդի արամադրութեան լայն տատանումներից:

Ուստի բժշկութիւնը իր մեծ նպատակն իսկապէս իրականացնելու համար պէտք է մանի քաղաքական ու սոցիալական կեսնքի մէջ, պէտք է ցոյց տայ այն պատճառները, որոնք արգելում են կենսական երեսովթների նորմալ ընթացքը. նա պէտք է ծգախ ու հասնի այդ պատճառները վերացնելուն և եթէ երբեք համնել զլան՝ այն ժամանակ բժժկութիւնը ընդհանուրի սեփականութիւն կը դառնայ (ինչ որ նա պէտք է լինի իսկապէս):

Բերլինից մեկնելու օրը Վիրխովը առաջարկութիւն արաւ երեւելի մանկաբարձ կարլ Մէեի աղջկան, որ և համաձայնութիւն տւաւ նրա կինը լինելու:

Ե

Վիրխովը Վիւրցբուրգում եռուն գիտական գործունէութիւն ունեցաւ և հրապարակ հանեց մի շարք աշխատութիւններ, ի միջի ալլոց բնապշութեան մասին: *)

Այդ նպատակով նա շրջեց բազմաթիւ գիւղ ու աւաններ. հետազոտութեան արդիւնքը նշանակելի եղաւ, բայց ժանր աշխատանքով ձեռք բերւեց: Աղգաբնակութիւնը շատ թշնամաբար էր նախում նրա հետազոտութեան, իսկ մի անգամ ստիպւած եղաւ մինչև իսկ գիշերով փախչելու մի աւանից, որ աղատւի տգէտ ամբոխի կատաղութիւնից:

Վիւրցբուրգում Վիրխովը շարունակում է ծրգտել միենոյն նպատակների, բայց աստիճանաբար և հանդարտ. նա այլևս չի ծրագում յափշտակել, այլ աշխատում է համոզել. այստեղ նա հրապարակ է հանում աւելի շատ սառն դատողութիւն, քան բուռն կիրք. նրա անծի մէջ քաղաքական գործիչը ենթարկում է գիտնականին:

Բայց մի անգամ ևս նա ցոյց տւեց երիտասարդական աշխոյժ, երբ ուղարկւեց Սպեսսար, սովոր առաջ եկած համաճարակն ուսումնասիրելու:

Վիրխովը այս անգամ էլ բարեխղճութեամբ ու բազմակողմանի կերպով ուսումնասիրեց համաճարակը և նորից մատնացոյց արաւ այն սոսկալի սովոր:

*) Տես իմ «Առողջ և հիւանդ երեխայի հոգին» գըրբայկը:

զիալական պայմանները, որոնք սովու և նրան ու-
ղեկցող համաճարակի պատճառն էին հանդիսանում:

Եւ նրա առաջարկած բոլոր միջոյները յան-
գում էին այս եղակացութեան. «Ժողովրդի տե-
ւական առողջութեան միակ գրաւականներն են կըր-
թութիւնը, բարեկեցութիւնն ու ազատութիւնը»:

Այս զեկուցման առիթով նորից յարձակւեցին
Վիրխովի վրայ, բայց նա չէր վախենում, որովհետեւ
ազատ ու անկախ զիտութեան առաջընթաց մար-
դիկներից մէկն էր: Նա գրում էր թշնամիների գէմ.
այս ամենը մեզ համար չէ, այլ մեր ընդհանուր գոր-
ծի համար. թող մեր տունը բայց տեղ լինի կանդ-
նած, թող նա ամենքին մատչելի լինի, թող պարզ
լինի ամենքի համար մեր հայեացքը, որովհետեւ մենք
լուսից չենք վախենում. ամեն բան պէտք է հրապա-
րակական լինի:

Վիրխովի 7 տարի Վիրցբուրգում մնալը
այնտեղի համալսարանի կեանքում կազմում է մի
փալուն շրջան: Տեղի բժշկական ընկերութեան հան-
դիսաւոր նիստին, որ գումարել էր Վիրխովի մեկ-
նելու առիթով, ասել են, որ այս մեկնումը շար-
ժում է մեր ընկերութեան հիմքերը:

«Վիրխովի հետ մեզանից հեռանում է ոչ մի-
այն մի ազնիւ ու հաստատուն բնաւորութեան տէր
ընկեր, ոչ՝ նրա հետ հեռանում է մի խիստ շնոր-
հալի տարր, մեր ամենալաւ ոյժը: Վիրխովի նշա-
նակութիւնը մեր ընկերութեան համար ոչ այնքան
նրա զիտական գործերն են, որքան էլ մեծ ու յա-
փշտակիչ բան ունենան իրանց մէջ, նպաստաւոր ու

հրահանգիչ լինեն՝ որքան այն ոգին, որ ապրում է
նրանց մէջ: Նրա մեծագոյն ժառայութիւնը այն
մարդասէր ուղղութիւնն է, որին նա միշտ հաւա-
տարիմ էր մնում. այս ընկերութեան մէջ Վիրխովը
ոչ միայն մեծ հետազօտող էր և զիտնական, այլ և
որոշ ուղղութեան ներկայացուցիչ»:

Վիրխովի համար Վիրցբուրգում լինելը ան-
հետեանք չմնաց. նա ինքն ընդունում է, որ շատ
բան է սովորել այսակեդ:

Նրա համար այս շրջանը մասնաւորապէս ախ-
տաբանական պրոցէսսները ուսումնասիրելու շրջան
էր. նա հաւաքում էր այն իրողութիւնները, որոնք
յետոյ կազմեցին նրա երեկոյ «վանդակացին ախ-
տաբանութիւնը»:

Վիրխովը նորից եկաւ Բերլին և նորից մտաւ
այն համալսարանը, որտեղից 7 տարի առաջ դուրս
էր եկել, բայց այս անդամ իրեւ «ամբողջ զիտա-
կան աշխարհի ուսուցիչ», փառքի գաղաթնակէտին
հասած:

Այս ժամանակներն է սկսւում Վիրխովի զրա-
բոցը, որ գնալով տիրապետող աղքեցութիւն է ստա-
նում զիտութեան մէջ:

Վիրխովը չէր պարձնում ոչ իր բազմացեղ և
բազմաթիւ աշակերտներով, ոչ էլ այն բանով որ
նրանցից շատերը շարունակում էին աշխատել իր
զժամանակամբ, և բաւական հարստացնում
էին զիտութիւնը:

Իր ամենամեծ պարձանքը և զիտաւոր ժառա-
յութիւնը նա համարում էր այն, որ աշակերտնե-

րին սովորցրել է անկախ մտածել, պատրաստել է նրանց ազատ քննադատութեան համար: Եւ միայն այն բանի շնորհիւ, որ անաջառութիւնն ու քննադատական վերաբերմունքը նրանց համար մարմին ու արիւն է դարձել, հնարաւոր եղաւ այսպիսի երեսով: ամենից անխնայ քննադատութիւնները գրւում էին նրա աշակերտների ձեռքով և ամենալուրջ ընդդիմութիւնը նրա ուսմունքին ցոյց տւին իր իսկ ստեղծած դպրոցի սամերը:

Վիրխովը մի անգամ ամել է. ամենափայլուն յաղթանակը, որին կարող է սպասել որևէ ուսուցիչ այն է, երբ ինքն ուսուցիչն իր իսկ աշակերտից կարող է մի բան սովորել, որովհետեւ այդ ժամանակ նորից զարթնում է այն ստեղծագործ միտքը, որին ինքն անձնատուր էր եղել մի ժամանակ: Այս տեսակ յաղթանակներ շատ է բաժին ընկել վիրխովին:

1856 թ. աշնանը վերադառնալով Բերլին, Վիրխովը այստեղի ախտաբանական մարմնակազմութեան բաժինը դանում է բոլորովին անուշադիր թողած: Նա սկսում ու մեծ ջանքով կարգի է բերում ամեն ինչ: Ամեն բանի կարողանում էր ձեռքը հասցնել. նա ստեղծեց ախտաբանական մարմնակազմութեան թանդարան, դասախոսում էր համալսարանում և խմբագրում իր երեկի բժշկական թերթը «Դիւան» (արխիւ) անունով:

Վիրխովի դիւնական հոչակն այնքան մեծանում ու տարածում է, այնպիսի հեղինակութիւն է համարւում առողջագիտութեան հարցերում, որ

Նորւեգիայի կառաւարութիւնը նրան է յանձնում 1859 թ. ուսումնասիրել բորոտութիւնը:

Ծուտով նա նորից զորս է գալիս հասարակական ու քաղաքական կեանքի ասպարէզ. 1861 թ. նրան ընտրում են Բերլինի քաղաքային վարչութեան անդամ և քաղաքը նրան է պարտական իր առողջական բարեկազմութեամբ:

Հետևեալ տարին՝ 1862, նա Պրուսական սէմիմի անգամ ընտրվեց. ահա այդ ժամանակ նա հիմնեց յառաջադէմ կուսակցութիւնը ու դարձաւ նրա գլխաւոր առաջնորդը:

Նրա շնորհիւ այս կուսակցութիւնը մեծ նշանակութիւն ստացաւ և ոչ մի անգամ կոմպրոմիս չարաւ հզօր Բիսմարկի հետ, որի համար և Վիրխովը հրաւիրեց իր վրայ նրա բարկութիւնը:

Յայտնի է այն դերը, որ Վիրխովը խաղաց իր ընդդիմագիր կուսակցութեան առաջնորդ՝ կառավարութեան ու Սէմիմի միջև պատահած կոնֆլիկտի ժամանակ 1863 թ.:

Նա հանդէս է գալիս իրը բողոքով «Լոնգոնի յանձնաժողովի» վճռի դէմ, որով Շլեզվիդ-Հոլշակէնի հողերի մի մասը անցնում էր Դանիային: Այս վճիռը խիստ ընդդիմութեան պատահաց ժողովուրդի կողմից:

Իր փայլուն ճառն այս առիթով նա վերչացնում է այս խօսքերով. «Ճող գերման իշխանները զոհեն օրինականութեան հիմունքները («Ճագաւորի պէս») երսպական նպատակայարմարութեան համար, թող նրանք աքսորեն գերման իշխանական

ցեղերին, որովհետև այդ հաճելի է Դանեմարքին, թող իրար յետևից մէկ-մէկ զո՞ն բերեն գերմանական երկիրները, որովհետև իշխանները դաւաճանում են միմիանց, թող թոյլ տան նրանք, որ Դանիմարքը կորդէ մէր լաւագոյն դաւառներից մէկը:

Բայց, պարոններ, հեռու չէ ժողովրդի վրէժը այդ դաւաճանութեան համար:

Այդ տեսակ գործերը ոչ միայն անցնում են համաշխարհային պատմութեան էջերի վրայ, այլ և արիւնոտ տառերով զրում են ժողովուրդի սրաերում. և նա երբէք չի մոռանայ այդ»:

Հետեանքն այն եղաւ, որ պատգամաւորների մեջ մասը միացաւ Վիրխովին և մերժեց նախարարութեան այդ միջնորդութիւնը:

Զ

Այս շրջանում արտասանած նառերը նրան դրին մեծ քաղաքական գործիչների շարքը. ֆինանսական խնդիրներում ամենափայլուն զեկուցողներից մէկն էր նա և նախարարութեան խարազանը՝ նախահաշւի բննութեան ժամանակ:

Նա պահանջում էր որ քիչ ծախս անեն զինուորման, բերդեր շինելու ու պատերազմական նանապարհներ անցկացնելու վրայ և ընդհակառակն շատ ծախսեն ժողովրդի կրթութեան և առողջապահութեան, հիւանդանուցները շատացնելու, կլինիկաներ կառուցանելու, թերինի կոյուղիները լաւացնելու համար և այն:

Աւստրօ-պրուսական և ֆրանսա-պրուսական պատերազմի ժամանակ Վիրխովը ամենաեռանդուն մասնակցութիւնն ունեցաւ վիրաւորներին խնամելու գործում. նա կազմակերպում էր պրուսական ախտահանիչ խմբերը և բարակներ էր կազմում պատերազմի գաշտում:

Ազգային լուսաւորութեան նախարարութեան առաջարկով Վիրխովը 1869 թ. մի զեկուցում պատրաստեց գպրոցական հիւանդութիւնների մասին: Այդ զեկուցումը հիմք դարձաւ բազմաթիւ առողջապահական միջոցների, որոնք ձեռնարկեցին զըպրոցական հիւանդութիւնների դէմն առնելու համար: Այսպէս, օրինակ, գպրոցական կարգերի արդիւնք համարւեցին ողնաշարի ծռւելը, կարնատեսութիւնը, վարակիչ հիւանդութիւնների տարածւելը՝ ինչպէս աչքացաւ, ևայն:

Ֆրանսիայի և Պրուսիայի միջև բռնկած պատերազմը 1870 թ. խորապէս ցնցեց Վիրխովին և նա իր «Դիւանում» զգացւած էջեր նւիրեց նրան: Ահա օրինակ մի քանի մաքեր. «Նատ ցաւալի է, որ ինչքան էլ ուզնանք՝ մենք անկարող ենք այս գէպքում մեզ պատերազմ յախնող կառաւարութիւնը բաժանել այն ժողովրդից, որին նա քաշել է պատերազմի դաշտ մենք շատ լաւ ենք գիտակցում թէ որքան ենք պարագան այդ ժողովրդին»:

Այս պատերազմը նա համարում է տղիառութեան հետեանք. խկական զիտութիւնը հումանական գիտութիւնն է նրա կարծիքով: Նա կոչ է ա-

նում բժիշկներին, հրաւիրելով նրանց պատերազմի ժամանակ մարդասիրութեան պաշտօնեայ հանդիլսանալ և անխափր բարութիւն անել բոլորին:

«Բայց մենք միշտ պէտք է լիշենք, որ վերադոյն խնդիրները չեն վճռում պատերազմի ժամանակ. դրա համար հարկաւոր է տեղական աշխատանք խաղաղութեան օրերում. հումանական գիտութիւնը ու գործունէութիւնը պէտք է դառնան բոռը հասարակական կարգադրութիւնների հիմքը և բոլոր մասնաւոր ձգտումների նպատակը:

Պատերազմի ժամանակ մենք չպէտք է մոռանաք, որ մենք կուռում ենք այն ազգի հետ, որը՝ մեր ազգից յետոյ՝ ամենից շատ զոհեր է տւել մարդկութիւնը ազտաելու համար և որ խաղաղութեան ժամանակ մենք կարող ենք այդ ժողովրդի հետ միացած փոխադարձ մրցման ամենավեհ օրինակը հանդէս բերել նշմարիտ մարդկային գործերում:

Յեղափոխութեան մեջ սկզբունքները, որ սուտ կերպով այժմ դրւում են մեր դէմ, դուցէ ոչ մի երկում այնքան կուսակիցներ չեն գտել, որքան նրանց մէջ, որոնք այսօր զինւած կանգնել են ֆրանսիայի դէմ:

Եւ նրանք մի ժամանակ կը պարզեն իրանց համար, որ մենք իսկապէս կուի ենք մղում տղիտութեան դէմ և նրանից բղխող ստութեան, անբարոյականութեան ու մեծամասութեան դէմ»:

Պակաս հետաքրքրական չէ նաև նրա այն յօդւածը, որ լոյս տեսաւ իբրև պատասխան այն բո-

բոլոր յարձակումներին ու մեղադրանքներին, որ թափում էին ֆրանսիայի գիտականները զերծանացի գիտնականների վրաց:

«Քաղաքականութիւնը բաժանում է ազգերին, գիտութիւնը՝ միացնում:

Ուստի մենք յանկանում ենք, որ ֆրանսիացիք հասնեն ինքնավարութեան, որովհետեւ գերման հասարակական կենաքի այդ հիմնական ձեր լիովին կարող է ապահովել ազգերի ներքին ազատութիւնը ու խաղաղութիւնը»:

Երբ թերլինում հրաւիրւեց 10-դ միշազդային բժշկական համագումարը՝ Վիրխովը իր «Դիւանում» չերմ էլեր նւիրեց այդ հարցին, որոնցով աշխատում էր համոզել ֆրանսիացի գիտականներին թէ զերմանացիք նրանց կրնդունեն պատշաճ կերպով:

Համագումարները Վիրխովի կարծիքով կարող են նպաստել, որ մարդիկ փոխադարձաբար մօտենան ու հասկանան իրար. այս կողմից համագումարը խաղաղութեան միջոց է:

Փոխադարձաբար յարգելով միմեանց և ճանաչելով մէկը միւսի արժանիքը՝ մենք կը կուենք ոչ թէ զէնքով ու վիրաւորանքով, այլ ապացուցներով։ Եթէ միմեանցից բան սովորեն ամօթ չէ, ապա դուք է արհեստական արգելքներ ստեղծելը և դրանով անձնական յարաբերութիւնները զժւարացնելը ու անհնարին դարձնելը։ Ուրեմն յոյց տանք աշխարհին, որ բժշկութեամբ պարապելը ազնւացնում է մարդկանց և մօտեցնում մարդասիրութեան իդէալին։

Աշխատենք լնգհանուր զործի համար թէ պատերազմի և թէ խաղաղութեան ժամանակ. օդնէնք վիրաւորներին, բժշկնք հիւանդներին, որ բանսկինք էլ պատկանեն նրանք, որովհետեւ մենք՝ բժիշկներս չենք որ պատերազմ ենք ստեղծում և մե՛զ վրայ է ընկած ամենից առաջ՝ նրա սարսափները թեթեւացնելու և պառակտման ու ատելութեան տեղ հաշառութիւն ու միութիւն դնելու ազնիւ պարուականութիւնը:

Ֆրանս-Պրուսական պատերազմից յիսով Վիրխովը հեռացաւ քաղաքական ասպարիզից: Նա զրեցիր բարեկամներին. Ես հիմա անպէտք եմ երկրի ներկայացուցիչը լինելու. ներկայումս տիրող տրամադրութեան ժամանակ ես ոչինչ չունեմ պարլամենտում անելու. գուցէ ես ապրեմ մինչեւ այն օրը, երբ իմ ձայնը նորից պէտք էր դայ ժողովուրդին. այն ժամանակ ես կերթամ, եթէ ինձ կանչելու լինին.—իսկ այժմ չեմ կարող:

Նա Գերման մարդաբանական լնկերութեան հիմնադիրներից մէկն եղաւ 1869 թ. և մինչեւ մահը մնաց նոյն ընկերութեան նախագահ: Ինքն էր շատ տեղ անձամբ պեղումներ անում: Բերլինում նա հիմնեց հագուստաների և կարասիների թանգարան: Նրա ստեղծածն է նոյնպէս Բերլինի արհեստաւորների միութիւնը. որանց շրջանում յաճախ կարգում էր գասախօսութիւններ և շատ կարեռ խնդիրներ էր շօշափում. օրինակ կանանց հարցը: Նա պահանջում էր հաւասար իրաւունքներ կանանց համար և

միատեսակ դաստիարակութիւն երկու սեռի դպրոց-ներում:

Ընդհանրապէս շատ յաջող ու հետաքրքրական են Վիրխովի այն ճառերը, որոնք վերաբերում են դպրոցների և համալսարանների վերանորոգման. որովհետեւ տաշի ու կէսից աւելի նա մասնակցութիւն ուներ դպրոցական նորոգութիւնները բննելու գործում:

Նա պահանջում է, որ այն ամենը՝ ինչ որ բոլորովին հաստատուած դիտակտն ճշմարտութիւն է համարւում, ամբողջապէս մատչելի դառնայ ազգի ընդհանրութեան: Ազգը այդ ամենը պէտք է առնի իր մէջ, գործադրի և շահեցնի, պէտք է շարունակի աշխատել նրա վրայ: Ուստի պէտք է զգուշանանք և ժողովրդի՝ մանաւանդ ուսուցիչների զլուխը ըրպէտք է լցնենք այնպիսի բաներ, որոնք գեռ են-թագրական են մեզ համար:

Ամբողջ ազգին հետաքրքրող խնդիրները հետազոտել ամեն մարդ կարող է և ոչ իրաւունք չունի արգելելու նրան. դա հետազոտութեան ազատութիւնն է. բայց հարցը, չփուած խնդիրը՝ ուսուցման նիւթ չպէտք է դառնայ:

Ե

Համալսարանի նշանակութիւնը, տառմ է Վիրխովը, այն է, որ շարունակ պիտութեան՝ ապա ուրեմն և ժողովուրդի և հասարակութեան համար նա պատրաստի նոր, թարմ սերունդներ. լաւ պատրաս-

տւած մարդիկ՝ համալսարանի գիտութիւններով ճոխացած և բարոյական կանոններով ներշնչւած, որոնք պահպանէին գիտութեան սրբազան հուրը և մտցնէին հասարակական կեանքի բոլոր խաւերը:

Համալսարանի ամենազլիսաւոր հարստութիւնը նա համարում է ընտրողական սկզբունքն ու դաստութեան ազատութիւնը:

Ուսանողների մասին ասում է, որ նրանք պէտք է ենթարկւեն ընդհանուր քաղաքացիական օրէնքին, որովհետեւ ուրիշների նման նրանք ել քաղաքացի են:

Նա պէտք է գիտակցի, որ ինքը միայն մի առաւելութիւն ունի. այսինքն՝ իր պատրաստութեան շնորհիւ նա օգտում է ազատ ուսանելու իրաւունքից և համալսարանում դիտութիւններ ձեռք բերելու պատճառով համարաւորութիւն ունի պետութեան մէջ բարձր պաշտօններ զրաւելու:

Ուսանողութեան նպատակն է ուսանելը և պագայ դորժուն նէութեան պատրաստութիւնը և ոչ թէ այդ գործունէութիւնն ինքը:

Յաճախ համալսարանի ազատութիւնը վտանգվել է մի քանի անխոհեմ անձերի շնորհիւ, որոնք ձգտել են խառնւելու հասարակական գործերի ընթացքին: Բայց դնալով աւելի պարզ գիտակցեցին, որ համալսարանի նպատակը հանդարա գիտական աշխատանքն է և որ խաղաղ կեանքը հաստատել է շնորհիւ ազատ դաստութեան՝ ուսուցիչների համար և ուսանելու ազատութեան՝ ուսանողների համար:

Նա շատ անգամ է ափսոսէլ, որ բոլոր ֆակուլտանների ուսանողները առաջին տարին համարեւած ոչինչ չեն շնում:

Ով վարժարանի անազատ կեանքից ընկնում է համալսարանի ազատութեան մէջ, ընտական է որ մի առժամանակ ապրում է անհող, առանց նայելու ազագալին. մենք սովոր ենք այդ բանին ու զիշող:

Բայց այդ գիշումը որոշ սահմաններ պէտք է ունենայ, որովհետեւ այդ ազատութիւնը ոչինչ անելու կամ դւարձութեան ու կրքերը գոհացնելու համար չէ, այլ ուսանելու ազատութիւն է:

Թէ ուսուցիչը և թէ ուսանողը պէտք է լիշեն, որ համալսարանական պարապմունքների նըսպատակը համբագիտական ու բարոյական կրթութիւնն է և ընտրած մասնագիտութեանը կատարելապէս տիրաննալը:

Ուսանելու ազատութիւնից օգտւելու համար մարդ ուսանելու հակում պէտք է ունենայ, իսկ այդ հակումը կախւած է այն պատրաստութիւնից, որ ուսանողը ստացել է միջնակարգ դպրոցում:

Համալսարանը իրաւունք ունի պահանջելու որ նրա շէմքը կոխեն ուսման հակում և անկախ աշխատանքին ընդունակ մարդիկ, և ոչ թէ աւարտման վկայական ստացած պատանիներ:

Ամեն մի նորմալ երեխայ ուսման հակում ունի. այդ հակումը լաւ ուղղութեամբ զարդանալով կարող է ուսումնասէր զառնայ:

Ճշմարիտ ուսումնասէր մարդը փորձում է կա-

պեր հաստատել դէպքերի և երեոյթների, նրանց
ընթացքի և պատճառի միջև և չի հանգստանում
մէնչեւ որ դասում է նրանց պատճառական ու ծագ-
ման կապերը, այս աեսակ ուսումնասիրութեան մէջն
են ամփոփւած հետազօտութեան սաղմերը:

Ուստի դաստիարակի պարտականութիւնն է
ուսանողի հետազօտութեան հակումը դարձացնել և
մեթոդիկ համբով տանել:

Մինչ գեռ տարրական դպրոցներում այդ ուս-
ման սիրուն այնպիսի մեծ հարւած էն տալիս, որ
ժողովրդի սաւար մեծամասնութեան մէջ զարդա-
նում է ոչ թէ ուսման սէրը, այլ այդ սիրոյ ամե-
նաստոր տեսակը՝ հետաքրքրութիւնը, այսինքն ա-
մեն տեսակ վայրիվերոյ տեղեկութիւններով և ան-
կատար ըմբռնումներով գոհանալու հակումն և մի
առարկայից միւսին թռչող ուշազրութիւն:

Այսպիսով՝ ըստ էութեան ամենաազնիւ ու
բնածին հակումը մարդու մէջ խեղդւելով անօդուտ-
իսկ երբեմն հոյն իսկ վնասակար ծեւեր է առնում:

Երեխային երեոյթների ծագման ու պատճա-
ռական կապին վարժեց՞ ելու համար կարելի է նրա
մէջ հետաքրքրութիւն զարթեցնել դէպի պատճական
անցքերը, մանաւադ դէպի բնական պատճութիւնը,
որտեղ մենք գործ ունենք իրական առարկաների
հետ և որտեղ անմիշապէս կարող ենք ցոյց տալ
պատճառական կապը: Այստեղ շատ օգուտ կա-
րող եր բերել նկատողական ուսուցումք. բայց
այդ դէպքում էլ պէտք է աշխատել առարկաները
ցոյց տալ և ոչ թէ նրանց նկարները: Հին լեզու-

ների դասատւութեան մասին նա ասում է թէ սո-
վորեցնում են ոչ թէ լեզուի ողին հասկանալ, այլ չոր-
ու ցամաք քերականութիւն, այնպէս որ մեռած լե-
զուները դառնում են մեռցնող:

Դաստիարական վարժարանները աւարազներից ոչ
մինը կարող չէ հին լեզուներով գրել ու խօսել,
մինչ գեռ չէ որ մի ժամանակ լատիներէնը դիտնա-
կանների լեզուն էր:

Ներկայիս պայմաններում բոլոր ազգերի հա-
մար մի ընդհանուր լեզու լնդունելլ անկարելի բան
է. քանի որ ամեն տեղ զարթնում են ազդութիւ-
ները ու զարդանում է ազգային զգացմունքը. պէտք
է իրանց արժանի իրաւունքներ վայելեն նաև ազ-
գային լեզուները:

Վարժարաններում՝ մեռած լեզուների հետ գե-
րակիու նշանակութիւն ունի նաև քերականութիւ-
նը, որի իմանալլ լառաշաղէմ զարդացման այն գոր-
ծոնք չէ, որ անհրաժեշտ է մեր երիտասարդու-
թեան:

Քերականութիւնը չէ ստեղծում մեր մէջ ու-
սանելու այն ժարաւը, որ անհրաժեշտ պայման է
յետագայ ինքնուրոյն զարդացման:

Դասատւութեան հիմքը ոչ թէ բանասիրու-
թիւնը պիտի կազմի, այլ մատեմատիկան, ֆիլիսո-
փայութիւնը ու բնական գիտութիւնները, որոնք
կարող են ուսման սէր զարթեցնել մեզանում:

Վիրխովը ընդհանրապէս այն կարծիքն է,
որ ինչպէս միշին այնպէս էլ բարձր դպրոցը պէտք
է զարդացնեն մարդու մէջ սիստեմով աշխատելու

ընդունակութիւնը, ուստի հակառակ է արձակուրդ-ների կրծատելուն:

«Արձակուրդները անհրաժեշտ են թէ պրոֆեսորների և թէ ուսանողների համար. պրոֆէսորը միայն այդ ժամանակ կարող է հարստացնել իր զետիւն առաջարր, իսկ ուսանողը՝ որևէ բան սովորել:

Համալսարանը ուսանողին կարող է ժանօժացնել զիառութեան մէջ եղած մեթոդների և սկզբունքների հետ. մնացած աեղեկութիւնները նա ինքը պէտք է ձեռք բերի, իսկ այդ բանը հնարաւոր է միայն արձակուրդներին:

Իրեւ գործնական բժիշկ Վիրխովը ասասր տարի շարունակ կառավարեց Շարիտէ հիւանդանոցի կալանաւորական բաժինը:

Տրօքեալի պեղումների ժամանակ նա բժշկում էր շրջակայ յոյն զիւղերի աղքատ բնակիչներին. ամբողջ կեանքը նա այն կարծիքին էր, թէ միայն հիւանդն է բժշկական գործունեութեան առարկան և թէ բժիշկը երբէք չպիտի մոռանա, որ նրա վերջնական նպատակը մարդասիրականն է:

«Գործնական բժշկի վարձը պէտք է լինի այն գիտակցութիւնը թէ ինքը մտիթարում, ցաւը թերեացնում, բժշկում է»:

Բժշկական բնկերութիւնները Վիրխովը համարում էր միատեղ աշխատել ցանկացողների միութիւն և կապ, որովհետեւ այդ բնկերութիւնների նպատակն է զարգացնել կազմակերպւելու զգացնումը և պահպանել կոլեգիալ ողին: Այդ բնկե-

րութիւնների շահերը դիառութեան ու մարդասիրութեան շահերն են, իսկ նրանց նշանակութիւնը—միատեղ աշխատանքով գիտութիւնն ու գործնականը փոխադարձ յարաբերութեան մէջ գնելը:

Բոլոր միւս բնկերութիւնների նման, որոնց նպատակն է ինքնազարգացում ու ինքնակրթութիւն՝ բժշկական բնկերութիւններն ևս պէտք է զարգացնեն կոլեգիալ զգացմունքը, օրինակով և ազգեցութեամբ նրբացնեն անդամների խիզճը և բարձրացնեն մորալը մինչև օրէնքի աստիճանը:

Տարբեր բժշկական բնկերութիւնները երբեմն պէտք է հաւաքւեն միասին, որպէս զի բժշկաբանութեան մի ճիւղի մասնագէտը լիշողութեան թարմացնի կամ նոր սովորի միւս մասնագիւղի հիմունքները: Այս գումարումները խիստ կարենոր ու ցանկալի են, որովհետեւ որքան շատ շփւեն մարդկի իրար հետ, այնքան աւելի լաւ կը նանաչեն միմեանց և այնքան աւելի օգտակար կը լինին մարդկութեան:

Ը

Դեռ ևս մէջն չիպակրաս՝ բժշկաբանութեան հայրն է ասել թէ «որտեղ սէր կայ գէպի մարդիկ, այնտեղ սէր կը լինի նաև դէպի գիտութիւնը»: Այս սէրը նկատում է Վիրխովի ամբողջ կեանքի ընթացքում. նա է նրա բոլոր գործերի արմատն ու հիմքը: Վիրխովը որևէ գործի ձեռնարկելիս անձնատուր էր լինում նրան լիովին:

Որպէս քաղաքային խորհրդի ձախաւոր, նազալիս էր նիստերին մասնակցելու՝ հարուստ տեղեկութիւններով զինւած և իր անւան ու գիտաւորութիւնների մաքրութեամբ հմայում ամենքին. իսկ մասնաւոր յանձնաժողովներում նա հանդիսանում է իրբու անդադրում դործող և մեծ մասամբ իր վրայ է ընկնում հարցերը մշակելու ժանր աշխատանքը: Այդ ամենը յետոյ ենթարկւում էր հրապարական քննութեան:

Պէտք է ասել, որ Վիրխովը ամենից շատ աշխատել է Բերլինի սանհիտարական դործի համար, մասնաւանդ քաղաքի կոյուղացանցի համար, և դրանորհիւն է, որ Բերլինը ներկայումս ամենասիրուն և առողջ քաղաքներից մէկն է:

Կոյուղացանցը ամեն մի խոշոր քաղաքի առողջապահիկ կացութեան գլխաւոր պալմանն է և աղբահանձան (ասսենիզացիա) ամենախելացի միջոցը: Բայց կոյուղացանցը մէնակ բաւական չէ. հարցը են ուրիշ շատ պայմաններ: օրինակ՝ աղքատների բնակարանային պայմանները լաւացնել և ալլ:

Ի դէպ ասենք այստեղ, որ քաղաքները պարտաւոր են չքաւորների համար մի քանի յարկանոյ, մեծ տներ կարուցանելու, որոնց հեշտ լինի առողջապահական հսկողութեան ենթարկել: Այդ դէպքում մեծ դեր կարող են խաղալ համաշխատակից բնկերութիւնները:

Առողջութիւնը ու մահացութիւնը, ասում է Վիրխովը, կախւած են չափազանց բարդ պատճառներից և չի կարելի ասել, որ դործի մի կողմը բար-

ւոքելով մենք ակնյալանի հետևանքներ կ'ստանանք:

Քաղաքային կոյուղացանցի խնդրի հետ բնականօրէն կապւած է մի ուրիշ հարց՝ թէ որտեղ թափեն քաղաքի կեղաստ չըերը:

Վիրխովի մէծ ծառայութիւններից մէկն էլ այն է, որ միշտ բողոքում էր կոյուղինների ջրերը գետերի մէջ թափելու գէմ, որքան էլ այդ գետերը արագանոս ու ջրաշատ լինէին. և պատահած ժամանակ ամեն անդամ եռանդով պաշտպանում էր այն միտքը, թէ անհրաժեշտ է բաց ջրամբարները դկուշութեամբ պաշտպանել աղդուսւելուց:

Վիրխովի կարծիքով ամենախելացի միջոցը կոյուղինների ջրերը անվնաս գարծնելու՝ ոռոգողական գաշտերի կանոնաւոր կազմութիւնն է: Հանրային առողջութեան ու Բերլինի բժշկական-առողջապահիկ կազմակերպութեան վերաբերեալ ոչ մի հարց քաղաքային խորհրդարանում չի անցել առանց Վիրխովի եռանդուն մասնակցութեան:

Ի դէպ պէտք է ասել, որ Վիրխովը ինքն է գտել արիսինան և դրանով սկիզբ դըել խողի մսի վրայ եղող հսկողութեան, որի համար նա տւել է զիտական հիմունք:

Փորհարինքը մշտական հիւանդութիւն էր Բերլինում. ամեն աշուն հիւանդների թիւը բաւական մեծանում էր. իսկ երբեմն դառնում էր բաւական խոշոր համահարակ:

Այդ փորհարինքի ուսումնասիրութեան Վիր-

Խովը շատ ջանք նւիրեց և շատ անմիջական հետազոտութիւններ հրատարակեց:

Նա հաստատեց այն իրողութիւնը, որ փորհարինքը առանձնապէս և բաղմաթիւ մարդկանց է պատահում այն աշխան, որին նախորդում է չորս տօթ ամառ:

Մի շարք ուսումնասիրութիւններ, որ կատարեցին զանազան երկիրների ու պետութեանց բազմաթիւ քաղաքներում, լիովին հաստատեցին Վիրխովի այդ գիտողութիւնը:

Վիրխովի արած ուսումնասիրութիւնները հարինքի ու նաև խոլերի մասին զիսաւորապէս վերաբերում են այդ հիւանդութիւնների առաջ դալու և տարածւելու պատճառներին: Ահա այստեղ Վիրխովը հանդիսացաւ իբրև հակառակորդ Միւնխէնի երեկոի պրոֆէսոր Պետանկոֆէրի նոյն այդ խնդիրների մասին ունեցած ուսմունքի հիմնական դրութիւններին: Գիտութեան երկու հսկաները կռւի բռնւեցին:

Պետանկոֆէրը ուսուցանում էր, որ փորհարինքն ու խոլերը ընդհանրապէս այն տեղերում ու բնակավայրերում միայն կարող են զարդանալ, որտեղ հողը՝ իր կազմութեան, իր խոնաւութեան աստիճանի, ողի ու շրի համար ներանցիկ լինելու և աղտոտութեան պատճառով՝ այդ հիւանդութիւնների զարգացման համար նպաստաւոր պայմաններ է ներկայացնում:

Պետանկոֆէրը շատ մեծ նշանակութիւն էր առաջիս գետնի շրերին (почвенныя воды) և նրա կար-

ծիքով համահարակից առաջ միշտ մեծ քանակութեամբ դետնի չուր է թափւում:

Հետեւապէս՝ եթէ որևէ քաղաք գտնուում է այն տեսակ գետնի վրայ, որ ներանցիկ չէ շրի համար, ապա այդտեղ ոչ մի անգամ չի կարող խոլերի համահարակ պատահել:

Այստեղից հետեւցնում է արդ Պետանկոֆէրը, որ հիւանդները ու նրանց արտաթորութիւնները վտանգաւոր չեն, ուստի և լիովին աւելորդ է հիւանդներին անշատել ու նրանց արտաթորութիւնները ախտահանել, իսկ չուրը, ինչպէս և ամեն մի սննդաբար չիւթ, չի կարող համահարակի պատճառ դառնալ...

Վիրխովը համածայն չէ Պետանկոֆէրի ուսման վերը լիշած բոլոր հիմնական կէտերին, մինչ գեռ շատ զիտնականներ (ինչպէս այն ժամանակ այնպէս էլ այժմ) նրա ուսման ճշմարտութիւնը կասկածից գուրս էին համարում:

Գետնի շրերի աղտոտելը ըստ Վիրխովի վրտանգաւոր է այն պատճառով, որ նրա հետ աղտոտաւում են նաև խմելու շրի հորերը և այդ երեսիթը զօրեղ է լինում մանաւանդ զետնի շրերը թափւելու ժամանակ:

Եթէ Վիրջբուրգում խոլեր չի եղել, զրա պատճառն այն է, որ քաղաքը շատ լաւ չըմուղ ունի Խոլերը կարող է ազդել նաև նաւով ճամբորդողների վրայ, թէև նրանք ազատ են ամեն տեսակ գետնային ազդեցութիւններից, ինչպէս որ իրօք էլ պատահեց 1866 թ. նաւի վրայ: Հետեւ-

պէս չի կարելի մերժել կարանտինների օգուտը համաճարակների առաջն առնելու համար. ահա թէ ինչու Վիրխովը անհրաժեշտ է համարում հիւանդներին առողջներից անշատելը և նրանց արտաթորութիւններն ախտահաննելը:

Բանը շատ աւելի պարզեց ու հասկանալի դարձաւ, երբ հոչակաւոր Կոխը 1881 թ. գտաւ խոլերի մանրէն: Պետականովերի ուսմումքը ներկայումս բաւական խարխլւած է և առաջին ու ամենախիստ հարւածը Վիրխովի հղօր ձեռքն է հասցը նրան:

Չի կարելի այստեղ լոռութեան տալ, որ գեռ 1874 թ. Վիրխովը յայտնեց այն ճշմարտ միտքը, թէ այդ վարակիչ հիւանդութիւնների ժամանակ (օրինակ՝ ըութէշը, ծաղիկը, բկացաւը, կարմրուկը և այլ) վարակումը կրողներն ու տարածողները զլխաւորապէս մարդիկն են. հետեւապէս՝ այդ հիւանդութիւնների ժամանակ անմիջական վարակումն է տեղի ունենում:

Ուրեմն Վիրխովը ընդունում է, որ այդ վարակիչ հիւանդութիւնները տարածւում են խիստ-խիստ ապրելուց, որ վատ բնակարանային պայմանների հետեւանք է, ինչպէս նաև հիւանդին առողջներից շուտով չբաժանելուց, որ հիւանդանոցային գործի և ընդհանրապէս առողջապահական հսկողութեան վատ կազմակերպութեան արդիւնք է: Ուրեմն վատ են այդ պայմանները, այնքան աւելի տարածւմ են այդ վարակիչ հիւանդութիւնները:

Այդ հիւանդութիւնների առաջ դալու և տա-

րածւելու գործում մեծ նշանակութիւն ունին նաև զուտ աեղական պայմանները. ինչպէս օրինակ՝ կեղասա հողը, օդն ու ջուրը, բնակարանների և արտաքին միջավայրի կեղար:

Հանճարեղ Վիրխովը հետազոտութիւններ ու հեղինակութիւններ ունի դպրոցական առողջապահութեան մասին, հետազոտել է հասարակական առողջապահութեան այնպիսի կարեոր հարցեր, ինչպէս վատ յաւը (սիֆիլիս) ու անառակութիւնը:

Բաղդատոր Գերմանիան հիմա ոչ սովորէ և ոչ խիստ համաճարակներ. համարեա չգիտէ ինչ է հարինքը, մաղիկից համարեա ոչ ոք չի մեռնում այնտեղ և նախանձելի բարձրութեան վրայ է ժողովրդի առողջութեան ու լուսաւորութեան և սրանց հետ անմիջապէս կապւած ընդհանուր բարեկեցութեան մակերեսովը:

Ճ

Եւ իսկապէս ազգի առողջութիւնը, լուսաւորութիւնը ու բարեկեցութիւնը միշտ միասին, ձեռք ձեռքի տւած են ոռաջ գնում. զրան շատ է նպաստել Վիրխովի սիրան ու անմահ ողին:

Վիրխովի շնորհիւ էր գարձեալ, որ գերմանական բաղաբներում լայն հիմքերի վրայ զրին հրապարակական դասախոսութիւնները, որոնք վերաբերում էին տարրական առողջապիտութեան և նրա ունեցած կապին՝ մանկավարժութեան հետ:

Եւ այդ գասախօսութիւնները լինում էին ժողովրդի համար, մատչելի լեզով՝ համարեա ամեն օր:

Ահա նրա բաղմաթիւ հրապարակական գասախօսութիւններից մէկը, որ կարգացել է բաղաքաշին ուսուցիչների միութեան մէջ և որ մէնք մէջ ենք բերում համառօտած:

Առողջապիտութիւնը բժշկական գիտութեան այն ճիւղն է, որ ուսումնասիրում է արտաքին միջավայրի ազդեցութիւնները մարդու առողջութեան վրայ՝ միջավայրը հասկանալով բառի լուգարձակ մտքով, այսինքն ամեն բան, որի հետ մարդշփում է միջապէս կամ անմիջապէս:

Հիմնւելով փորձառական հետազօտութեան, ինչպէս նաև զիտողութեան ու համեմատական ուսումնասիրութեան վրայ, առողջապիտութիւնը ցոյց է տալիս միջավայրի ինչպէս բարելաջող այնպէս էլ անբարելաջող ներգործութիւնները մարդու վրայ. և թէ ինչպէս վերջին կարդի ներգործութիւնները մարդկանց հասցնում են հիւանդութեան. հետեւապէս հիւանդութիւնների պատճառներն ուսումնասիրելը առողջապիտութեան հիմնական խնդիրն է:

Շատ բնական է, որ ներկայումս հանդէս գալով իրրե փորձառական զիտութիւն, առողջապիտութիւնը սահմանակից է նաև բժշկապիտութեան միւս ճիւղերին: Ամենից շատ նա շփման կէտեր ունի ախտաբանութեան հետ, որովհետեւ երկուսի ինդիրն էլ ըստ էութեան շատ մօտ են իրար:

Եւ իսկ որ՝ ախտաբանութիւնը ինքն էլ գործ

ունի հիւանդութիւնների պատճառներն ուսումնասիրելու հետ. բայց նա ուսումնասիրում է նրանց անմիջապէս, մարդու մարմնի մէջ:

Մարդկալին մարմնակազմը այն ժամանակ է ենթարկում ախտաբանութեան հայեցողութեան, երբ այս կամ այն արտաքին պատճառն արդէն աղդել է նրա վրայ վնասակար կերպով. և ախտաբանն ուսումնասիրում է այն հիւանդական փոփոխութիւնները, որոնք արդէն առաջ են եկել մարդու մարմնի մէջ, ինչպէս նաև այն հնարները, որոնցով կարելի է օգնել մարմնակազմին վերականգնելու իր մասերի փունկցիաների խանդարւած հաւասարակութիւնը:

Ի՞նչ ճանապարհներով է ազդում մարդու մարմնին այս կամ այն հիւանդառիթ պատճառը, ի՞նչ էութիւն ու ձև ունի նա մարդուց զուրս եղած ժամանակը արտաքին միջավայրում, ի՞նչ տեղ ամենից առաւել է նա զարգանում, ի՞նչու երկու նման մարդկանցից մէկն է հիւանդացել և ոչ միւսը, ի՞նչու մի հիւանդութիւն միանգամից շատ մարդ է վարակում:

Ինչումն է մարմնակազմի ինքնապաշտամանութեան էութիւնը հիւանդութեան ժամանակ, ի՞նչով կարելի է մարդուն անխոցելի դարձնել որոշ հիւանդութիւնների դէմ, կամ ինչով կարելի է նրա այդ յատկութիւնը մինչև մի որոշ աստիճան զօրեղացնել, ի՞նչպէս կարելի է հեռու պահել մարդուն կամ նրանց ամրող խմբերը հիւանդանալուց—այս բոլոր հարցերը վերաբերում են առողջապիտութեան:

Այս բոլորից պարզ երեսում է թէ մարդուս համար որքան կարեղը և անհրաժեշտ է առողջապիտութեանը մօտ ծանօթանալ:

Այս հարցերի վերաբերմամբ եղած այն ժամանակւաց տեսութիւնները մեր ժամանակակից տեսակետից երեսում են իրեւ մարդկային մաքի մոլորութիւններ^{*)} և Վիրխովի արած քննադատական վերլուծութիւնները զրանց վերաբերմամբ կարելի է համեմատել կենգանի չրի աղբիւրի հետ, որ երկրի մութ խորշերից ցայտում է դուրս դէպի լոյսը, զիտական ճշմարտութեան լոյսը:

Գիտական քննադատութիւններ անելիս Վիրխովը հարցերը քննում էր բաղմակողմանի ու սպառիչ կերպով. իսկ թէ բացասում էր որևէ կարծիք, այդ նոյն է թէ ոչնչացնում էր լիովին:

Ես ինձ թոյլ եմ տալիս մէջ բերելու մի փոքրիկ, բայց բնորոշ օրինակ, որ հետաքրքրական է, որովհետեւ վերաբերում է երեկոի պլոփէսոր հանդուցեալ Բոտկինին:

Բոտկինը մի անգամ յախնեց այն հայեացը, որ վերադարձ հարինքը մարդուն բռնում է այն ժամանակ, երբ կերակրի հետ փչացած կարտոֆել է կերած լինում:

Այս խնդրի վերաբերմամբ չհամաձայնելով երեւելի ռուս զիտականի հետ, Վիրխովը մանրամասն ու լրիւ առաջ է բերում կարտոֆելի պատմոթիւնը, որ բռնում է մի բանի էջ. ով և ե՞րբ առաջին ան-

*) Տես իմ «Սնապաշտութիւնը և կախարդութիւնը»:

դամ կարտոֆելը բերեց Ամերիկայից Սպանիա, իսկ այգտեղից Խտալիա, Գերմանիա և այլն: Յոյց տալով, որ վերադարձ հարինք կար այնտեղերում, որտեղ գեռ կարտոֆել չէր մտել, զրանով արդէն Վիրխովը ցոյց էր տալիս Բոտկինի կարծիքի անհիմնինելը:

Տարինքների պատճառներն ըստ Վիրխովի՝ բազմաթիւ վնասակար պայմանների միահամուռ գործունէութեան մէջ են, ինչպէս օրինակ վատ բբնակարան, նեղւածքութիւն, սնունդի պակասութիւն, վատ ջուր, արհամարհանք դէպի մաքրակեցութեան կանոնները և այլն:

«Այդ հիւանդութիւնների համար մեղաւոր են ոչ թէ զանազան դիսաւորներ ու հրաբուխներ, կամ թէ արտաքին աշխարհի ուրիշ չնախաւենւած անդիմագրելի և խորհրդաւոր ներգործութիւններ,—այլ ամեն բանում մենք ինքներս ենք մեղաւոր» ասում է Վիրխովը:

Սեփական մեղաւորութեան դիտակցութիւնը առաջին բայլն է դէպի ուղղւելը և վերամնելը, ուստի Վիրխովի վերը բերած խօսքերը ունին նաև կրթիչ նշանակութիւն:

Մաղկահատութեան խելացի գործագրութիւնով կարելի է բոլորովին առնել ծաղկից մեռնելու առաջը, ինչպէս բկացաւի սինուկը գործագրելով կարելի է բաւականին պակսեցնել այդ հիւանդութիւնից մեռնողների թիւր:

Գործագրելով այն միջոցները, որոնք հիմնած են վերջերս արած զիւտերի վրայ, կարելի է աղ-

գալնակութիւնը ազատ պահել չերմախափ նման սոսկալի հիւանդութիւնից, որի պատճառը մոժակներն են:

Իսկ կեանքի սոցիալական պայմանների լաւացումը կարող է միայն նպաստել ու հեշտացնել այս կամ այն առողջապահական միջոցների ծեռնարկութիւնը. բայց առանձին առաձ նա գեռ բաւական չէ հասարակութիւնը վարակիչ հիւանդութիւններից ազատ պահելու համար:

Մի ուրիշ փոքրիկ օրինակ. մի չնչին վերքից, նրա կեղաստելուց, մի հասարակ արիւնհոսութիւնից մարդ կարող է մեռնել եթէ նրան անմիջապէս նախնական բժշկական օդնութիւն չհասցնեն. ուստի և վիրխովը առաջարկում է ցանկացողների համար հրապարակական դասախոսութիւններ մտցնել հիւանդապահութեան և սկզբնական բժշկական օդնութեան վերաբերեալ: Իսկ որպէս զի հասարակութիւնն ինքը զարթնի ներգործական դեր խաղալու, վիրխովը այդ նպատակով ցանկալի է համարում առանձին միութիւններ կազմել, որոնց գործունէութիւնը նպաստէր հիւանդներ խնամելու գործին, միևնուն է՝ փողով թէ անձնական աշխատանքով: Այդ դասընթացները անհրաժեշտ են, մանաւանդ հիւանդանոցներում բանիմաց հոգունիներ (քոյրեր) ունենալու համար:

Ժ

Վիրխովի ամբողջ գործունէութիւնը ուղղւած էր մարդու ուսումնասիրութեան, նրա կեանքի այս

կամ այն կողմին. այն ամենը, ինչ որ օտար չէր մարդուն՝ վերաբերում էր նրան:

Վերև ասինք, որ վիրխովը յատնի էր նաև իբրև մարդաբան. նրա առաջին մարդաբանական աշխատութիւնը վերաբերում էր բնապուշների գանգերի ուսումնասիրութեան:

Սկզբում հետաքրքրւելով բնապշութեամբ զուտ բժշկական տեսակէալից, վիրխովը կամաց կամաց լայնացնում է հարցի ուսումնասիրութիւնը և այդպիսով հասնում բնապուշների գանգերի գանգաբանական հետազօտութեան:

Նա յոյց է տալիս մարդու գանգի զարգացման օրէնքները, զանգի կարերի կազմութիւնը. այդ աշխատութիւնները իրանց հետազօտական մեթոդով, իրանց հետևաբանութիւններով ու ընդհանրացումներով մարդաբանութիւնը դիաութիւն դարձրին:

Վիրխովի այս աշխատութիւնը լոյս տեսնելուց յետոյ միայն՝ Բրոկան Պարիզում կազմում է առաջին մարդաբանական ընկերութիւնը և իր աշխատութիւններով զարկ է տալիս ու վերչացնում մարդաբանութեան զարգացումը:

Այդ բնկերութեան հիմնարկութիւնից յետոյ եւրոպակի շատ քաղաքներում նոյնպէս հիմնում են մարդաբանական ընկերութիւններ. միևնուն ժամանակ հրաւիրում են համագումարներ, որոնք զբաղւում են մարդաբանական ունինագիտական հարցերով:

Այն բաղմաթիւ նկատողութիւնները ու առանձին յօդւածները, որ վիրխովը տպում ու զե-

կուցում է ընկերութեան նիստերին, ապշեցնում
են իրանց քանակով, մանաւանդ նկատի առնելով
որ մարդաբանութիւնը նրա գլխաւոր պարապ-
մունքը չէր:

Հիւսիսային Գերմանիայի պեղումներից յետոյ
գեանի տակից բազմաթիւ դամբարան—քաղաքներ
(նեկրոպոլիս) դուրս եկան. այստեղ թաղումը կատար-
ում էր կաւէ դամբաններում, որոնց մէջ դտնւում
էին այրած ու փշրւած ոսկորներ:

Որովհետեւ մարդաբանութեան համար այդ փո-
շին շատ չնչին նիւթէր, ուստի սկսեցին ուսումնա-
սիրել թաղման հետ կապւած միւս առարկաները,
որոնք դտնւում էին դամբանների մէջ, օրինակ դա-
գաղածեւ ամաններ, որոնց մէջ թաղում էին մեռա-
ծին, ուրիշ իրեր ևալլ:

Այսպիսով Վիրխովը իր հնագիտական ուսում-
նասիրութիւններով ցուց տւաւ մարդու ուսումնա-
սիրութեան երկրորդ կողմը—այսինքն նրա կուլ-
տուրան, նրա գործունէութեան արտազրութիւնը,
այն ամէնը ինչ որ նա թողնում է իրեւ վկայու-
թիւն կուլտուրական այս կամ այն դրութեան:
Հնագիտութիւնը, որպէս նշմարիտ գիտութիւն
կուլտուրայի և նրա պատմութեան պէտք է ու-
սումնասիրի նաև վերը լիշւած հարցերը:

Նա պէտք է զբաղէի ոչ միայն այս կամ այն
ժողովրդի կուլտուրական գրութիւնով, որ երե-
ւան է դալիս պեղումներով, այլև պէտք է ընդզրկի
ազգերի ամբողջ շրջաններ՝, ուսումնասիրելով կուլ-

ուրացի շաւիղները, նրա տարածումը ու զարգա-
ցումը:

Այսպիսով Վիրխովը իրար դէմ է լնում հնա-
գիտութիւնը ու մարդաբանութիւնը, որպէս միւ-
նոյն առարկայի երկու կողմի անբաժան ուսումնա-
սիրութիւն և միայն երկու կողմի պարզւելովը
կարելի է վերջնական մշակութեան տալ մարդու և
նրա կուլտուրային վերաբերող գիտութեան խնդիր-
ները:

Մարդաբանութեան շրջանից Վիրխովը մի շարք
գնահատելի գործեր է տալիս, որոնք վերաբերում
են մարդաբանութեան ընդհանուր խնդիրներին և
գերման ժողովրդի ուսումնասիրութեան:

Այստեղ Վիրխովը առաւելապէս զբաղւում է
զանազան ցեղերով, որ պարզի նրանց գիրքը ուրիշ
ցեղերի վերաբերմամբ:

Այս նպատակով Վիրխովը մի շարք հետազօ-
տութիւններ է տալիս ասիսկան զանազան ցեղերի
մասին, ինչպէս օրինակ վիդասներ, այնուներ ևալլն:

Վիրխովի մասնակցութիւնը Շլիման պրոֆէ-
սորի պեղումներին նրա կեանքի ամենահետաքրը-
քրական իրողութիւններից մէկն է:

Բացի անձամբ ներկայ լինելուց ու մաս-
նակցելուց պեղման, Վիրխովը մի փոքրիկ յօդ-
ւած է զրել Շլիմանի զրքում, որտեղ քննում է
ալժմեան Տրոյայի գիրքը (փոքր Ասիայում) և ցուց
է տալիս, որ այնտեղ պէտք է կանգնած լիներ այն
այրւած ու հարուստ քաղաքը, որի շուրջ կատար-

ւել են հոմերոսի երևելի գործերի նիւթ դարձած դէպէրը:

Քնութեան ենթակայ իրողութիւնների վերլուծութիւնը վերին աստիճանի նիշտ է և մեկին, հետեւ արանութիւնները լրիւ, լայն ու հիմնաւոր ալսպէս է Վիրխովի հանճարը:

Վիրխովի բնաւորութեան հետաքրքրական զրձերից մէկն է սկեպտիցիզմը: Նրա կեանքը այնքան լի էր զբաղմունքով, նրա հասարակական, գիտական ու բաղաքական գործունէութիւնը այնքան անբասեր էր, հսական ու շահաղիտական ծգառումներից բարձր—որ նախանձը ու բամբասանքը չէին կարող վնասել նրան:

Նրա բնաւորութեան աչքի ընկնող կողմն է անսահման վստահութիւն դէպի մարդիկ, որ հասնում է մինչեւ դիւրահաւատութեան:

Վստահութեան ալդ գիծը բոլորովին կորչում էր, երբ բանը վերաբերում էր գիտութեան: Գիտութեան մէջ առանց բննագատութեան նա թուլ չէր տալիս ոչ մի բան, ամեն ինչ պէտք է ստուգել նիշտ փորձով, նիշտ հետազոտութեամբ. որքան էլ լաւ հիմնաւորած լինին ուրիշի կարծիքները ու ենթագրութիւնները—ամեն մարդ պարտաւոր է ինքը ստուգելու:

Եւ իսկապէս Վիրխովը ամենից առաջ իր աշակերտներին սովորեցրեց անկախ մտածել, վարժեցրեց նրանց աղատ քննագտառութեան:

Այս սկեպտիցիզմը, որի մասին այնքան խօսում է Շլիմանը, գուցէ ոչ մի տեղ այնպէս չի ար-

տայալաւել, ինչպէս Վիրխովի մարդաբանական և հնագիտական աշխատութիւններում: Հաւանօրէն Շլիմանը բաւական առել էր այդ սկեպտիցիզմի համը Վիրխովի հետ միասին պեղումներ անելու ժամանակ:

Վիրխովը ինքը գիտէր իր մտքի այդ յատկութիւնը: Նատ վաղ հասակից նկատում էր նրա մէջ մտքի այդ գիծը. գեռ այն ժամանակ, երբ առանց քերականութիւն իմանալու թարգմանում էր յունարէնից: Նրա խեղն ուսուցիչը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս կարելի է լեզու ուսումնասիրել առանց քերականութիւն իմանալու:

Այս պատմութիւնը խոր հետք թողեց պատանու հոգում և անշնչելի կնիք դրեց հանճարեղ մարդու կեանքի վրա:

ԺԱ

Զափաղանց բաղմազան են Վիրխովի գիտական աշխատութիւնները. որ գիտութեան էլ կպչում էր Վիրխովի ծեռքը—մի նոր պատմաշրջան էր սկսում այդ գիտութեան կեանքում:

Ոչ մի հնարաւորութիւն չկայ այս փոքրիկ գրքոյիսում առաջ բերելու այն ամենը, ինչ որ Վիրխովը արել է գիտութեան աշխարհում. վրա համար հատորներ են պէտք:

Գիտութեան մէջ (նեղ առումով) Վիրխովը առանձնապէս հռչակում է իբրև բչիչային համա-

կարգի յատկութիւնները դանող. այդ տեսութեան համաձայն, կեանքը բաղմաթիւ առանձին տարրերի՝ բջիջների գործունէութիւն է, որոնցից կազմւած է մարդու մարմինը. հետեւապէս հիւանդութիւնը կենդանական մարմնակազմի տարրակամն՝ մանր մասերի — բջիջների կենսագործութեան փոփոխութիւնն է:

Այս հայացքները, միանալով մանրագէտի, քիմիայի և բնախօսութեան յաջողութիւններին՝ բժշկաբանութեան միջից ընդ միշտ արտաքսեցին ամեն տեսակ մտահայեցական ենթադրութիւններ ու կառուցումներ և սեւա կապով շղթայեցին նրան բնաբանութեան ընդարձակ շրջանի հետ:

Այստեղից է ծագում նրա երեկի գրութիւնը. բջիջը ծագում է բջջից միայն (cellula e cellula):³⁾ Սրանով համարեա վերջ դրվեց կենսաբանների վէճին կենդանական մարմինների ինքնաժագան մասին. այդ խնդիրը վերջնականապէս վճռեց Փրանսայի երեկի գիտնական Պաստէօռը 1860 թ: Վիրխովի հիմնաւորած բջիջային սկզբունքը ոչ միայն չի հերքել ժամանակակից գիտութեան մէջ, այլև նոր հիմնաւորութիւն ու զարդացում է ունեցել, թէև արդէն 50 տարի է անցել նրա երեալու օրից»:

Իրեւ հիւանաժաբան՝ Վիրխովը անկախ ու առաջին անգամ պարզեց շատ հիւանդութիւնների հիւանաժաբանախօսական էութիւնը. ինչպէս օրի-

^{*)} Տես իւր գիրքը, «Մտերմական Խորհուրդներ պատանիներին»:

նակ՝ սպիտարիւնութեան՝ անզլիական հիւանդութեան *), գնդախտի, «նորակազմութեանց» մեծ մասի և.այլն:

Անդամատեց շատ օրդաններ ու առանձին հիւանաժներ և ուսումնասիրեց նրանց նորմալ կաղմութիւնը. նա դտաւ, որ ախտաբանապէս փոփոխւած օրդանների և նորակազմութիւնների մէջ զրանուում են հիւանաժների սովորական բնախօսական տիպերը և այլն:

Մեզ թւում է, որ այստեղ աւելորդ է կրկնել այն, ինչ որ վերն ասինք մի անգամ. բաղմակողմաննեութիւն—ահա անմահ Վիրխովի բնորոշ գիծը:

Կան մտրդիկ, որոնք կարծում են թէ դիտնականը պէտք է այս աշխարհի մարդ չլինի. նա ոչ թէ աշխատում է, այլ ստեղծագործում է:

Վիրխովի օրինակը ցոյց է տալիս, որ կարելի է գիտութիւնը հասարակական գործունէութեան հետ միացնել, որ միաժամանակ կարելի է թէ օրգանիզմի հիւանդ և առողջ բջիջները ուսումնասիրել և թէ քաղաքային խորհրդարանում որոտալից նառեր ասել առողջական միջոցների անհրաժեշտութեան, կոյուղացանցերի և ժողովրդի աղիտութեան մասին, որից և սովոն է առաջ դալիս:

Վիրխովը իր կեանքովը ցոյց տւաւ որ դիտութիւնն ու կեանքը կարող են գնալ ծեռք ծեռքի տւած. մի ճանապարհով:

Վիրխովի նման մարդկանց համար գիտութիւն

^{*)} Տես իւր գիրքը «Նւեր նորատի կանանց»:

ները գրադացիա չունին. ուր էլ տանի նրանց խուզարկու միաքը, ամեն աեղ նրանք տանու մարդեն և, կարելի է տսել, ամեն աեղ հրաշքներ են անում:

Վիրխովիլ իր ամբողջ բազմակողմանի գործունէութեամբ, իբրև գիտնական, դասատու, հասարակական ու գրական գործիչ, մի փայլուն օրիանակ է «հանրագիտակ» մարդու:

Նրա բազմազան աշխատութիւնները երբեմն խառնում են իրար հետ, երբեմն ձուլում, միանում, որովհետեւ բոլորի նպատակն է «մարդկութեան օգուտը»:

Տարբեր ճանապարհներով դիմելով մի նպատակի, նրանք ունեն միաժամանակ նաև մի ազբիւր —սէր ար մարդկութիւնը:

Այսպէս էր ահա մուզով Վիրխովիլ, այդ հաճարեղ գիտնականը, համակրելի ուսուցիչը ու ամբողջ մարդկութեան պարձանքը:

Արդ՝ ի՞նչ ենք անում մենք այժմ մարդու առողջութեան համար և ի՞նչ է ասում մեղ գիտութիւնը, մի քանի հարցերում:

Առողջագիտութիւնը —այդ՝ առողջութիւնը պահպանելու և բարւոքելու գիտութիւնն է, իսկ առողջապահութիւնը (սանիտարիա) —այդ՝ առողջութիւնը պահպանելու և բարւոքելու արւեստն է, այնպէս որ առողջագիտութեան և առողջապահութեան մէջ փոխադարձ սերտ կապ կալ:

Ամեն տեղ, բոլոր տէրութիւնների մէջ կազմակերպած կոփւ են մզում այն բոլոր արտաքին ու ներքին պայմանների դէմ, որոնք վնասաբեր աղդեցութիւն են անում հասարակական առողջութեան վրայ:

Օրէցօր աւելի են հետաքրքրուում ոչ միայն հիւանդութիւնները բուժելով, այլ և նրանց առաջըն առնելու և առողջութիւնը պահպանելու միջոցներով, մէր մարմնի ֆիզիքական ուժերը դարգացնելու հնարներով:

Այդ հետաքրքրութիւնը ինչպէս ասում է հարաւացի մի գիտնական, իր կողմից ցոյց է տալիս ազգերի կուլտուրական հասունութեան աստիճանը, որովհետեւ նախատեսութիւնը՝ որ կազմում է ամբողջ առողջապահական գործունէութեան հիմքը, քաղաքակիրթ մարդու ախպական նշաններից մէնն է:

Գիտական իրողութիւնների հիման վրայ, գիտնականների մեծամասնութիւնը այն համոզման է եկել, որ առողջագիտութեան նախազգուշացնող միջոցների օգնութեամբ կարելի է վերացնել կեանքին և առողջութեանը վտանգ սպառնող պայմանները և դրանով երկարացնել մարդու կեանքը, թէեկեանքն այսօր շատ աւելի դժւար է քան հին ժամանակները, երբ մարդիկ շատ աւելի երկար էին ապրում:

Միայն մի քանի բազգաւոր մարդիկ կարողանում են հասնել 70—80 տարեկան հասակին. ժամանակակից մարդկութեան համար այդ հասակը իդէալ է համարւում:

Այնուամենալիւ մենք իրաւունք ունենք յուսալու, որ այդ զառամեալ հասակը, որին միայն հատ-հատ մարդիկ են հասնում, ժամանակով շատերի կամ գուցէ նոյն իսկ մեծամասնութեանը բաժին կընկնի, երբ որ չքանան առողջութեանը ամենից շատ վնասող պայմանները:

Հաշւել են, որ եթէ հասնեն այդ իդէալին, եթէ որևէ պետութեան մէջ ազդաբնակութիւնը ապրի միշին թւով մինչև 70—80 տարին, այն ժամանակ ամեն տարի 1000 մարդուց 13 հոգի միայն կը մեռնի (ըստ պրոֆ. Ռոդիօի վիճակագրութեան):

Մինչդեռ Եւրոպական Ռուսաստանում 1000-ից մեռնում են 33—35 մարդ՝ Անգլիայում, Շլեզիայում և Նորւեգիայում մեռնում են երկու անգամ պակաս, այսինքն 1000-ին 15—18 մարդ:

Ընդհանրապէս ստուգւած է, որ ներկայումս այն երկրներում, որտեղ մահացութիւնն առհասարակ սակաւ է, մարդիկ միշին թւով ապրում են մինչև 60 տարեկան հասակը:

Գալով մինչև մի տարեկան երեխաների մահացութեան՝ տարբեր պետութիւնների մէջ տարբեր չափեր ունի այդ երեսովթը: Այդ հասակի ամենից շատ երեխաներ մեռնում են գժրազդաբար Ռուսաստանում. այդ կողմից նա առաջին տեղն է բռնում: Անգլիան, Շլեզիան և Նորւեգիան ամենից քիչ թւով երեխայ են կորցնում՝ 10—14⁰/₀, մինչդեռ Ռուսաստանը՝ 25⁰/₀, իսկ մի քանի տեղ նոյն իսկ 60⁰/₀ և մինչև անգամ 80⁰/₀!...

Հետեւապէս հարկաւոր է կազմակերպել մի տեսակ խաչակիր արշաւանք, մի պատերազմ մանուկների մահացութեան դէմ, ուրեմն և ամեն ձեռնարկութիւն պէտք է ուղղել ամենից առաջ այդ եւեոյթի պատճառները մեղմացնելու դէմ: *)

Ի՞նչ պատճառների արդիւնք է վաղահաս մահր: Յալտանի է, որ վաղահաս մահւան ամենայալտանի պատճառը հիւանդութիւններն են. Բաւարիայում, ինչպէս ցոյց է տալիս վիճակագրութիւնը, մահւան գէպքերի ^{1/3-ը} վարակիչ հիւանդութիւնների հետեւանը է:

Պէտք է իմանալ, որ վարակիչ հիւանդութիւնների պատճառը երեմն մեր երկրից գուրս պէտք է որոնել, որ մի քանի հիւանդութիւններ եկովի են, ինչպէս օրինակ խոլերը, որ Ասիայից է գալիս Եւրոպա:

Անգլիան լաւ է հասկացել այս բանը, ուստի սկսել է միջոցներ ձեռք առնել առողջացնելու այն արտաքին միջավայրը, որի մէջ աւզրում է մարդ, և որը յացանի պայմաններում յարմար հող է գառնում վարակիչ տարրերի զարգացման կամ հիւանդութիւնը հիւանդներից առողջներին փոխարքելու համար:

Նորից չկրկնելու համար այն, ինչ որ վերն ասինք, այստեղ համառօտակի թւենք, որ ներկայումս ամեն տեղ, բոլոր քաղաքներում այդ նպատակով անմաքրութիւնները հեռացնում են կոյու-

*) Տես իմ յօդւածը «Մանկական աշխարհ» Առողջապահիկ թերթ. 1904 թ. №9

դացանցի միջոցով, մաքուր չըի համար շինուած են շրմուղներ, փողոցները քարում են և մաքուր պահում, աղբն ալրելու համար վառարաններ են շինուած, բնակարանները լաւացնուած են և այն:

Այս կարգի բոլոր ձեռնարկութիւնները, որոնք ուղղւած են արտաքին միջավայրի՝ այսինքն օդի, չըի, հողի առողջացմանը, զործագրել են և գործադրուած են միաժամանակ, սիստեմօրէն և յաճառութեամբ, և արդէն ազգել են մահացութիւնների թիւը պակասելու վրայ:

Վարակիչ հիւանդութիւնների դէմ ուրեմն և երկարակեցութեան համար մղած կուռւմ, առանձնապէս աչքի են ընկնուած բոլոր քաղաքակիրթ երկիրները իրանց հետեւողական և յամառ դործունէութեամբ և առողջապահական ձեռնարկներով: Ներկայուածս նրանք հասել են բաւական շօշափելի արդիւնքների և այս ամենը, կրկնուած ենք, ընդհանրապէս բարերար ազդեցութիւն է անուած մարդկանց առողջւթեան վրայ և հիւանդութեան ու մահացութեան գէպքերը քչացնուած է: Այսպէս օրինակ առողջապահական ձեռնարկութիւնները Վարշաւայուած, թէև գեռ իրանց գարդացման շրջանուածն են, բայց արդէն բաւական իշեցրել են ընդհանուր մահացութիւնը 32-ից հասցնելով մինչև 25 — 22-ը ամեն հազար մարդուց:

Զարդացնելով վարակիչ հիւանդութիւնների ուսումնքը և ուսումնասիրելով հիւանդառիթ մանրէակների յատկութիւնները — զիստութիւններ հասարակական առողջապիտութեան ձեռքը տւեց մի նոր

հզօր միջոց կուելու համար վարտկիչ հիւանդութիւնների, ուրեմն և մեծ մահացութեան դէմ:

Սկս նոր միջոցը աչքի առաջ ունի ոչ թէ արտաքին միջավայրը, ինչպէս վերը չիշած առողջապահական ձեռնարկութիւնները, այլ մարդուն իրան:

Այս միջոցը ծգտուած է, առանձին հնարների միջոցով, ամեն մարդու մէջ զօրեղացնել կամ նո՞ր առաջ բերել զիմացիկունութիւն այս կամ այն հիւանդութեան դէմ, արհեստական ձանապարհով զըրգուելով կամ ուժեղացնելով օրդանիզմի ինքնապսշտպանութեան ընդունակութիւնը:

Բնական և արհեստական անխոցելիութեան ուսումնասիրութիւնը ստեղծել է նախազգուշական բժշկութեան մի մասնաճիւղ — նախազգուշական պատւաստները, օրինակ ծաղկի դէմ, որ դեռ 1798թ. փորձնական ճանապարհով դաել էր անզլիացի Ֆենները:

Այս շրջանուած յետագայ հետազօտութիւնների և զիւտերի համար բանական ճանապարհներ բացին միայն մասնարդէտալին մանր էտկների — հիւանդառիթ մանրէների աշխարհը գտնելով — այսինքն՝ երբ երեւելի զիտանական Պաստեօրը նախազգուշական պատւաստներ անելու կերպերը գտաւ Սիբիրական ախտի և կատաղած շների թոյնի դէմ:

Շուտագի եղան ուրիշ նման զիւտեր, ներկայուածս մէնք ունենք նախապատրաստական պատւաստներ շիւանդութիւնների դէմ, ինչպէս օրինակ Բերինզի և Կիտազատօի (եալորնացի) շինուկը բկացաւի դէմ, Խովկինի պատւաստը գեղձուուցի, Ժանտախտի

դէմ—որ մարդկութեան սոսկալի պատուհասներից մէկն է:

Պէտք է յուսալ, որ մօտ ապագայում այդ շրջանի մէջ մարդկութիւնը միշտ նոր և նոր գիւտեր կ'անի, օրինակ զնդախտի, խոլէրի, հարինքների և մինչև իսկ սիֆիլիսի դէմ:

Պրուսիայում մինչև պարտադիր ժաղկահատութեան ընդունելը հարիւր հազար մարդուց մեռնում էր մօտ 100-ը, իսկ 1897 թ. ամբողջ Գերմանիայում, այսինքն 50 միլիոն ազգաբնակութիւնից միայն երեքն են մեռել այդ հիւանդութիւնից:

Պակաս յաջող հետեանքների են հասել ծաղկի դէմ կուելիս այն պետութիւնները, որտեղ ծաղկահատութիւնը պարտադիր չի եղել, օրինակ Ֆրանսիայում և Աւստրիայում:

Այդ է պատճառը, որ Ռուսաստանում ևս ծաղկահատութիւնը շատ չնչին յաջողութիւն ունի. բայց այստեղ աւելանում է և մի ուրիշ հանդամանք. ծաղկահատութեան ամենամեծ արգելքը ազգաբնակութեան անդրագիտութիւնն է և նախապաշարւած անը պատւաստից (որ ռուս գիւղացու կարծիքով նեռի կնիքն է) ինչպէս ասում է մի ռուս զիւնական:

Գիտութիւնը հաստատել է վերջնականապէս, որ ծաղկը բոլորովին պէտք է չքանայ բոլոր քաղաքակիրթերկիրներից պարտադիր ծաղկահատութեան և հինգ-վեց տարին մի անդամ կրկնող պատւաստների շնորհիւ:

Պէտք է ասել, որ շատ բժիշկներ գրաւում են նախագուշական պատւաստներով, մինչդեռ առող-

շագիտութեան խնդիրն ու իդէալները շատ աւելի լայն են:

Որպէս զի մարդկալին օրդանիզմը կարողանայ առանց իր ընդհանուր առողջութեանը վնասելու երկար ժամանակ անխոցների մնալ շատ հիւանդութիւնների դէմ, անհրաժեշտ է ամենից առաջ միջոցներ որոնել մարդկանց կենսական ուժերի պաշարը մեծացնելու համար:

Ներկայումս մենք ուրիշ միջոցներ չունենք մարդու կենսական ուժերի պաշտին աւելացնելու, քան նրա սնունդը լաւացնելը և ապրուստի պայմանները բարողելքը, սկսած երեխանների կանոնաւոր ֆիզիքական դաստիարակութիւնից մինչև չափահանների կեանքն ու աշխատանքի պայմանները լաւացնելը:

Պէտք է աչքի առաջ ունենալ ժողովուրդի տղիտութիւնը, վատ սնունդը, ուժից վեր աշխատանքը և ուրիշ շատ բան, որոնց պատճառները խորն են մտած ժամանակակից կեանքի պայմանների մէջ, և որոնց հետ պէտք է կուել ոչ միայն բժշկառողջապահական միջոցներով, այլ և հասարակութեան լայն խաւերի և պետական իշխանութեան միջոցով:

Բոլոր ուժով ու միջոցներով զինւեցէք մանուկների հիւանդութիւնների դէմ, զնդախտի, սիֆիլիսի և խմողութեան դէմ—այդ բոլորը վատասեռում ու կործանում է մարդկութիւնը:

ՅԱԽԵԼԻՒՅՑ.

Այստեղ աւելորդ չենք համարում մի քանի
համառօտ տեղեկութիւններ տալ այն հիւանդութիւն-
ների մասին, որ լիշտակեցինք այս զրքոյի կում:

1. ԲԾԱՀՈՐ ՀԱՐԻՎ.

Սովորինքը, ուաղմահարինքը և բժաւոր հարինքը խիստ վարակիչ հիւանդութիւններ են, որոնք շատ զոհեր են տանում. նրանց զոհ են գնում և շատ բժիշկներ ու հիւանդապահներ՝ վարակւելով իրանց պարաբը կատարելու ժամանակ:

Հիւանզութեան պատճառը յայտնի է, ենթադրում են որ այսաեղ ել մանր օրգանիզմներն են դեռ խաղաղողիք:

Վարակւել կարելի է օդի, անմիջական յարաբերութեան, մի երրորդ մարդու և անշունչ առարկաների միջնորդութեամբ:

ԲԺԱԼՈՐ Հարինքով վարակումներ գեռ մինչեւ
այսօր էլ պատահում են Ռուսաստանում, Վենդրիա-
լում, Իրլանդիայում, Խաղթականում և այն:

Կարելի է ասել, որ շատ անդամ հիւանդութիւնը այդ տեղերից է անցնում ուրիշ երկիրներ. միջնորդ հանդիսանում են պանդուխաները, բեռնակիրներն ու թափառաշրջիկները։ Շատ անդամ

ստուգւած է, որ այդ հարինքը տարածւել է այն տեսակ տեղերում, որտեղ մի կարճ ժամանակ կանգ է առել իւր հայրենիքում վարակւած օտարականիք։ Դիտողութիւնները ցոյց են տալիս, որ բժաւոր հարինքի համաձարակները լածախ սկսել են կեղծութեամանաբանութիւնը, աղքատիկ հիւրանոցներից։ Առոտ պաշւող շէնքերից, աղքատիկ հիւրանոցներից։ այսպէս օրինակ՝ շատ անդամ հիւրանոցութիւնը սկսուում էր ոստիկանատներում ու բանտերում, որ աղջից զնալով տարածւում էր աւելի լաջն չափերով։ Ամենից խիստ այդ հիւրանոցութիւնը տարածւում է սովի և պատերազմի ժամանակ, որից և ստացել է սովհարինք ու ռազմահարինք անունը։ Հիւրանոցութեան նշանները երեսում են վարակութեամբ 1—3 շարաթ՝ յետով միայն։ Վարակւածը կուծից 1—3 շարաթ՝ յետով միայն։ Վարակւածը կուծից 39—40⁰։

Դէմքը կարմբում է, շնչառութիւնն ու զարկեցականում են, ախորժակը կորչում է, ծառակը զօրանում է և ըիչ քանակութեամբ կարմիր պատը զօրանում է արտազրում։ Գլուխը ցաւում ու (յաղեցած) մէզ է արտազրում։ Կանաչը կանգնել չի կարողանում պտոյտ է գալիս. հիւանդը կանգնել չի կարողանում և յաճախ լնկնում է անդիտակից գրութեան մէջ ու զառանցում Յ—Յ օր։ Սրան յաջորդում է բծառություն (գուրս տալու) շրջանը

Բժիշը խոշոր են սխեռաչափ, կապտակարմիք
գոյն ունեն և հուալ տալիս գունաթափ են լինում,
սկզբում երեսում են կուրծքի և փորի արանքում,
յետոյ ծածկւում է ամբողջ իրանը, ձեռքն ու ոտքը
և վերջը դէմքը, մանաւանդ երեխաներինը:

ԲԺԵՐԸ մհում են մօտ 10 օր. յետոյ կաշւի վրայ եղեռում են թեփեր և բծերը չբանում: Բացի այդ բծերը երլեմն պատահում են գնդասեղի զլխի չափ արիւնհոսութիւնից առաջ եկած կէտեր—պետիւ-եաներ:

ԲԺԱԼՈՐԵԼՈՒ ժամանակ տաքութիւնը անփոփոխ է մնում և միան երկրորդ շարաթւայ վերջին կամ երրորդի սկզբին սկսում է անցնել, իսկ ճգնաժամին մեծ մասամբ առատ քրաինք է ընկերանում:

ԲԺԱԼՈՐ հարինքը միշտ լուրջ ելք է ունենում. իսկ եթէ հիւանդները ծերունիներ, խմորներ ու սրտախտի տէր մարդիկ են՝ նրանց հիւանդութեան ելքն առանձնապէս լուրջ է լինում, որովհետեւ նրանք դժւարութեամբ են տանում բարձր աստիճանի չերմութիւն և հեշտութեամբ զոհ են դառնում սրտի կաթւածին:

ԲԺԱԼՈՐ հարինքի ժամանակ ամենից վտանգաւորը սրտի կաթւածն է, որ թոյներով (տոկսին) վարակւելու հետեանք է. այդ վտանգը կարող է պատահել նոյն իսկ ապաքինելու ժամանակ: ԲԺԱԼՈՐ հարինքը ունենում է նաև բարդութիւններ, օրինակ՝ թոքերի բորբոքում և այլն:

ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ: Այս հիւանդութեան դէմ արմատական միջոցներ չկան: Անունդը իւղալի պէտք է լինի. կաթ, կարելի է նաև տալ գինի. պարկելախոցերից ազատելու համար հիւանդի զիրքը պէտք է շուտ-շուտ փոխել՝ երբ նա անդիտակից վիճակի մէջ է, զլխին պէտք է սառուցով փամփուշտ դնել: Հիւանդներին պէտք է առողջներից զատել. բնակա-

րանը, սպիտակեղենը, հագուստը և միւս իրերը պէտք է խնամքով ախտահանել շոգիով, ֆորմալինով, կարբոլով կամ սուլէմալով: Ասելն աւելորդ է, որ պէտք է ժամանակին զիմել բժշկի և գործել նրա ցուցմունքներով:

2. ԲՈՐՈՑՈՒԹԻՒՆ (Լեպրայ)

Բորը սրբնթաց կամ երկարատեւ հիւանդութիւն է. հիւանդանում է ամբողջ մարմինը. արտաքին մորթը ինչպէս նույ բերանի, քթի և կոկորդի մաղասաթաղանթը ենթարկւում են փոփոխութիւնների:

Միշին գարերում այս հիւանդութիւնը շատ տարածւած եւրոպայում և միայն խիստ անցարկել (կարանտին) միջոներով հնարաւոր գարձաւ նրա տարածելու առաջն առնել: Ներկայումս սակաւաթիւ հիւանդներ պատահում են նորւեգիա, Շվեդիա, Իսպանիա, Ռուսաստան, Ռումենիա, Յունաստան, Իտալիա, Հնդկաստան, Պարսկաստան, Տաճկաստան, մինչև իսկ սրանից երկու երեք տարի առաջ մի քանի հիւանդներ են պատահել Պետերբուրգում, Մոսկվայում, Բագրում և այլն:

Հիւանդութեան պատճառը համարւում է բորառիթ ծողիկը, որ առաջին անդամ դտաւ Հանդէնը Լոնդոնում 1880թ:

Հիւանդութիւնը միշտ պատահում է 20—40 տ. հասակում և համարեա չի դիպչում երեխաներին: Բորութիւնը մի քանի տեսակ է լինում,

սակայն մի տեսակը զարգանալով իր բնթացքում
մէջ մասամբ փոխում դառնում է միւս տեսակ:

Սովորաբար յօնքերի շրջանում և ծեռքերի երե-
սին երեսում են սակաւաթիւ մուդ-կարմիր բծեր,
որոնք չքանում են և նորից վերադառնում՝ կամաց
կամաց դարչնի դոյն առնելով:

Այդ տեղերը ճնշման ժամանակ ցուլ են զգում
և դնալով հաստանում են ու դառնում կորածե
հանգուցներ՝ սաշմի մեծութիւնից սկսած մինչեւ կա-
ղինի մեծութիւնը: Այդ հանգուցները թանձր ու
ճկուն կազմութիւն ունեն և մոխրագոյն են՝ երբեմն
փայլուն երեսով: Կամաց-կամաց, նրանք բարձրանում
ուռչում են. շատ անդամ կարելի է շօշափել նրանց
մորթի աակից և նկատել որ պալարածե են:

Հանգուցները կամ չոկ-չոկ են լինում կամ
խումբերով. նրանք կարող են տարածւել ամբողջ
մարմնի վրայ, բայց ամենից շատ զարգացած են
լինում յօնքերի, ականջների, շրթունքների, կղակի
և քթի վրայ:

Երբ այդ հանգուցները դէմքի վրայ են լինում,
այն ժամանակ դէմքը փոխում է իր արտայայտու-
թիւնը բնորոշ կերպով. այդ տեսակ դէմքին ասում
են առիւծի կերպարանք: Ընդհանրապէս դէմքն աւե-
լի լայն ու տափակ է երեսում, դիմագծերը չնշում
են. ճակատի մորթը հաստանում է, կնճիռները խո-
րանում են, յօնքերը հաստանում, այտերը կախում
են, բիթը հաստանում ու լայնանում է, շրթունք-
ները ուռչում են և ականջները հաստանում:

Գլխի կաշւի վնասուած տեղերում մազերը թափ-
ուում են:

Բորի հանգուցները զարգանալով սովորաբար
ենթարկում են խոցալին քայլաման:

Երբեմն այդ խոցերը խորանում են, այնպէս
որ մահացումը կարող է կալչել նաև մկաններին,
չիղերին ու ոսկեներին. իսկ յօդերի քայլայումից
յետով նոյնիսկ մատները թափուում են, իսկ երբեմն
ամբողջ անդամը. օրինակ խեղճ հիւանդը չըի կուժը
ձեռքին տանելիս, յանկարծ տեսնում է, որ ամբողջ
ձեռքը կամ մի քանի մատները վայր ընկան:

Հիւանդի ծայնը սկսում է խռպոտիլ և վերջը
անլսելի դառնալ. բայցի այդ շատ անդամ կոկոր-
դում երեսում են խոցեր. յանախ այդ խոցերի պատ-
ճառով քթի կրծուկէ միշնորմը ընկնում է:

Բորի միւս տեսակը բծաւոր է. կաշւի վրայ
երեսում են մի կամ մի քանի բծեր. երիզով շրջա-
պատաւած, բծերը լինում են 10 կոպ. դրամի մեծու-
թիւնից մինչեւ մի թաթի չափ:

Նրանք ամենից շատ տարածւած են լինում
դէմքի և անդամների վրայ. ինչպէս նաև մարմնի
ուրիշ տեղերի վրայ. սկզբում նրանք կարմիր գոյն
ունին. ժամանակի ընթացքում սպիտականում են
և կեղեր անդզայանում է. բծերը սկզբում չափա-
զանց զգայուն են. յետոյ կարող են կորցնել այդ
յատկութիւնը ու անդզայանալ կամ աւելի թույլ
զգալ. այս հանգամանքը կարեորութիւն ունի իբրև
ախտանիշ:

Բորի երրորդ տեսակը կամ անկախ է առաջ դալիս, կամ այս նախընթաց երկու տեսակից:

Այս տեսակին նախորդում են բշտիկներ, որոնք կարող են տարիներ տևել. յետով կամաց-կամաց մորթն ու մկանները անզգայանում են, մատների վրայ երեսում են խեղումներ. Երեսում են նաև խոցեր, որոնք կարող են վայր թափել:

Սովորաբար վնասում են նաև նեարդերը. օրինակ ձեռքինը, ուսինը, որոնց կարելի է բարակ պարանների նման շօշափել ու նկատել կաշկի տակ:

Բորոտութիւնը տեւական հիւանդութիւն է և յաճախ շարունակում է տասնեակ տարիներ. մահը պատահում է կամ զօրացող ուժասպառումից, կամ թարախային վարակումից, որ առաջ է դալիս բորոտի խոցերում կամ պատահական հիւանդութիւնից, օրինակ թոքերի բորբոքումից:

Ամենայուսակի միջոցը հիւանդութեան տարածւելու առաջն առնելու համար հիւանդին զատեն ու պահպանելն է յատուկ բորանոցներում, և ոչ թէ այդ խեղձերին հալած ելլը:

Պատահել են դէպքեր, որ հիւանդութեան սկզբին հիւանդը լաւացել է՝ զործ ածելով հնդկական «շոոլ-մողբա» խղը. դժբախտաբար այդ խղը միշտ չի օդնում:

Կրկնում ենք՝ այստեղ մեծ դեր է խաղում զատումք: Ներկայումս բորոտութեան դէմ վերին աստիճանի եռանդով կռւում են անզլիացիք Աւատրալիալի մօտ գտնւող Սանդլիչեան կղզիների վրայ: Պետութեան կարգադրութեամբ բոլոր բորոտ-

ները պէտք է ուղարկւեն Մալակա ժայռուա կղզին, որտեղ նրանց համար առաստ կերակուր են տանում նաւերով:

Հայր Դամիան միսսիոները կամովին բնակութիւն հաստատեց այդ կղզու վրայ, որ օգնութեան ձեռք մեկնի այդ մշտնչենական աքսորեալներին և ընկերացաւ նրանց աքսորին, վերջն էլ՝ հիւանդութեան:

Զնայած դրան գտնւեց մի ուրիշ հերոս-նահատակ, այս անունն էին տալիս Դամիանին ամերիկացիք և անզլիացիք, որը նոյնպէս կամովին հեռացաւ Մալակա կղզին խնամելու Դամիանին, որ հիւանդացել էր բորոտութեան վատ տեսակով. այդ երկրորդ հերոսը հայր Կոմարդին էր:

Մեղանից ամեն մէկը, կարգալով կոմարդու վերջին հաշւետութիւնը, կ'ասի, որ այդ երկու մարդը հանդէս են բերել ամենաբարձր արիութիւն, որ կարելի է երեակալել:

Դամիանի կենսագրութիւնը, որ իսկապէս մի սուրբ մարդ էր, գրւած և թարգմանւած է բոլոր լեզուներով *):

ՅՊԻՑԱՐԻԿԱՆՈՒԹԻՒՆ (ԼԷՅԿԵՄԻԱ).

Սպիտարիւնութիւնը արեան հիւանդութիւն է, որի պատճառը արեան սպիտակ գնդակների շատանալը և կարմիր գնդակների պակասելն է:

*) Կայ նաև հայերէն Գ. Գ. Մկրտումեանի թարգմանութեամբ:

Սպիտարիւնութիւնը մի հիւանդութեան վերջնական պատկերն է, որ գժբախտաբար մինչեւ այժմ մեղ ծանօթ է միայն իւր արտայալտութիւններով, իսկ նրա ծագումն ու էութիւնը մեղ անյատ է առ այժմ. զարգացած զրութեան ժամանակ այդ հիւանդութիւնը մահ է բերում հիւանդին:

Գլխաւորապէս վիրխովին ենք պարտական այս հիւանդութիւնն ուսումնասիրելու ուղին հարթելու համար. որա մասին նա զրել է դեռ 1845 թ.։

Սպիտարիւնութեան բնորոշ առանձնայատկութիւնը համարում են սովորաբար արիւն արտազրող օրդանների ծանր հիւանդութիւնները. այստեղից առաջ է գալիս արեան կազմութեան փոփոխութիւնը: Նայած թէ հետեւեալ երեք օրդաններից որն է վնասւած—փայծախր, աւշային գեղձերը թէ սուկրուղեղը, հիւանդութիւնն էլ կոչում է նրանց անունով, օրինակ՝ սուկրուղեղային սպիտարիւնութիւն ևային: Պէտք է այս էլ ասենք, որ սպիտարիւնութեան տարբեր ձեւերը այլեալ խմբումներ են կազմում իրար հետ:

Արիւնն արգէն աւել կամ պակաս փոխում է իր գոյնը. մանրագէտը ցոչց է ապլիս, որ ոչ միայն արեան սպիտակ գնդակները նկատելի չափով շատացել են, այլ և որ կարմիր գնդակները համեմատաբար քչացել են: Նորմալ պայմաններում սպիտակ ու կարմիր գնդակների յարաբերութիւնը մօտաւորապէս պէտք է լինի ինչպէս 300—805: 1. մինչդեռ սպիտարիւնութեան ժամանակ 50 կամ մինչեւ իսկ 10 կարմիրգնդակին գալիս է մէկ սպիտակ

գնդակ. իսկ ամենածանր դէպքերում սպիտակ զընդակները գերակշռում են կարմիրներին:

Մի քանի գիտնականներ կարծում են, որ այս հիւանդութիւնը վարակիչ է. մի քանիսը հաւատացնում են, որ այդ արիւնի քաղցկեղ (Բաբ) է. բայց դեռ այդ պացուցւած չէ:

Դէպի այդ հիւանդութիւնը մարդու մէջ տրամադրութիւն են ստեղծում կարիքի մէջ անցրած կեանքը, որ կապւած է ուժերի խիստ լարումի հետ, հոգսերը, պատերազմի ծանրութիւնները. յանախ առաջ է զալիս երեխայ ծնելուց յետով, ինչպէս նաև մի ժամանակ սիֆիլիս ունեցած լինելու պատճառով: Այս հիւանդութիւնը քիչ է պատահում ծերերին ու երեխաներին:

Շատ անգամ հիւանդութեան նշանները խիստ աննկատելի են զարգանում:

Ակզրում մէծ մասամբ գանգատւում են փայծախի ուռուցքից, որ փորի ծախ կողմը առաջ է բերում ճնշման ու լցւածութեան զգացում:

Սրան շուտով միանում է գեղձերի ուռուցքը, որ ստանում է նոյն իսկ մի բառնցքի մեծութիւն՝ մանաւանդ վզի վրայ, կռնատակի փոսում և աճուկներում. ուռուցքը երբեմն գանգաղ է լինում, յանախ աւելի արագ և թոփքներով, շատ անգամ սրան կցւում է անկանոն չերմ և ամբողջ կաշին նկատելի գունաթափում է. բացի այդ նկատում է բաւական շնչառութիւն և մի քիչ արիւնհոսութիւն աղիքներից ու քթից. պատահում է նաև

աւել կամ պակաս չափով խլութիւն և տեսողութեան թուլութիւն:

Նատ անգամ փայծախն այնքան մեծանում է, որ բռնում է ոչ միայն փորի ամրոց ծախ կողմը, այլ և աչ կողմի մեծ մասը և այսպիսով սղմում ու ծնշում է միւս ներքին գործարանները. մի քանի օրգանների տեղափոխութեան պատճառով առաջ է դալիս սրաի արագ զարկ և կրծքի սղմածութեան զգացում:

Սպիտարիւնութիւնը երկարատև ընթացք ունի, թէև պատճառում են և սրբնթաց տեսակներ, որ մահ են պատճառում մի քանի օրւայ կամ շաբաթւայ մէջ: Երկարատև սպիտարիւնութիւնը սովորաբար տեսում է մէկից մինչև երկու տարի:

Մահւան պատճառը ուժերի արագընթաց սպառումն է, արեան կորուստը, ուղեղային արիւնոսութիւնը և պատահական հիւանդութիւնները: Ընդհանրապէս սպիտարիւնութիւնը ժամը ու անդուժելի հիւանդութիւն է:

4. ՏՐԻԽԻՆՈԶ:

Տրիխինը խոշոր որդերի տեսակին է պատկանում. առաջին անգամ այդ որդը գտել են 1833 թ. Լոնդոնում մարդու և մի քանի կենդանիների մկաններում:

Տիրիխինական հիւանդութիւնը առաջ է դալիս արիխինի մարդու մարմինը մանելուց. այդ հիւանդութեան առաջ բերած երկութմները ընդհանրապէս

կապ ունին արիխինների դարդացման և կենսական պրոցեսունների հետ:

Սովորաբար մարդ հիւանդանում է արիխինով վարակւած խողի միս ուտելուց յետով, որի մէջ այդ որդերը չեն սատկել կերակուրը պատրաստելու ժամանակ:

Վարակւած միսն ուտելուց յետով արիխինները մարդու ստամոքսից մտնում են նուրբ աղիքները, այստեղ երեք օրւայ ընթացքում հասունանում և բեղմնաւորւում են և մեծանում 3—4 անգամ, իսկ եօթն օրից յետով ահազին բազմութեամբ սերունդ են արտադրում:

Նորելուկները աղիքներից մտնում են մկանները. այստեղ նրանք խցկուում են մկանային թելերի արանքը, իսկ յետով ծածկուում են մի պարկով:

Տրիխինային հիւանդութիւնը համաձարակի ձեռով է երեսում սովորաբ որ. զրա պատճառն այն է, որ վարակւած խողի միսը միաժամանակ շատերն են ուտում. վարակումը տարածւում է մի որոշ խանութից:

Ուրիշ անգամ հիւանդանում է ազգականների և ժանօթների մի շրջան, եթէ ճաշել են միատեղ կամ ընծայ են ստացել վարակւած խողի միս:

Որքան խողախոռները կեղտոտ ու անկարգ են լինում, այնքան աւելի են վարակւում խողերը արիխինում, այնքան աւելի են վարակւում խողերը արիխինով: Վատանդաւոր են և արիխինով վարակւած խինով: Մկներն ել փոխանձությունը ուտում են խողերը: Մկներն ել փոխա-

դարձաբար վարակւում են խողերից, որովհետեւ ու-
տում են նրանց արտաթօրութիւնները:

Որովհետեւ մկները յաճախ դաշտում են մի
ախոռից միւսը, ուստի նրանք շատ հեշտ կարող
են վարակել խողերի մի ամերոջ բոլուկ: Թէ որն է
այդ հիւանդութեան սկզբնապատճառը—մուկը թէ
խողը, գեռ անորոշ է մնում:

Ինչպէս վերն էլ ասինք, երբ մարդու աղիքնե-
րում արիխինան բեղմնաւորում ու հօթն օրից յե-
տոյ ահագին քանակութեամբ նոր սերունդ է առաջ
բերում—սրանք արագութեամբ թողնում են աղիք-
ներն ու մտնում մկանները: Մի քանի մկաններում
արիխինը շատ յաճախ են պատահում. այսպէս են
օրինակ՝ ստոծանին, կողամիջի մկանները, ծայնա-
կապերի մկանները, զիի, ազերի և ծամելու մկան-
ները, իսկ անդամների մկաններում ամենից շատ
արիխին պատահում ենք զիլերի մօտ:

Մատաղ արիխինները մտնելով մկանների մէջ
առաջ են բերում րորոքում և մի քիչ ժամանակ
անցնելուց յետոյ որդը պատում է լիմոնածե ծած-
կովթով, որտեղ նա կարող է կենսընդունակ մնալ
երկար տարիներ:

Մկանների մէջ արիխինն արգէն պարզ աչքով
նկատելի է, որովհետեւ նրա ժածկովթը (կապսիւլը)
նման է փայլուն-դեղին մանր կէտի. երբեմն մկան-
ները լիքն են լինում այդ տեսակ մանր կէտերով:
Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մկանները պէտք
է ենթարկւեն մանրագէտալին հետազօտութեան:

Տրիխինով վարակւած անձերը առողջ են մնում

մօտ մի շաբաթ. եօթ օրից յետոյ միայն սկսում է
սիրար խառնել ու թափել փորը բացւում է. այս
բոլորը երբեմն ասխական խոլէրի նմանութիւն է
աալիս:

Հիւանդներն սկսում են դանդատել, որ իրա-
նի և անդամների մկանները խիստ ցաւում են.
ամենաթեթև շփումը հիւանդաղին ցաւ է պատ-
ճառում. ծայնը խռպոտում է, շնչառութիւնը զրժ-
ւարանում. իսկ անդամներն ամեն անգամ շարժւելիս
անտանելի ցաւում են. ծամելիքի մկանները կծկում
են և տախտակի պէս փայտանում. յօնքերն ու ան-
գամները չբակալում են:


Սովորաբար արիխինալին հիւանդութեան ըն-
կերանում է չերմը, մինչև իսկ 39—40°c. բայց այդ
չերմը որոշ բնժացք չունի. սակայն չերմացին դրու-
թիւնը շարունակում է երկար ժամանակ. ծարաւը
զօրանում է, ախորժակը կորչում. լեզուն փառա-
կալում է. հիւանդները խիստ քրտնում են, երեսում
են քրտնքի խոշոր կաթիւներ. միշտ դանդատում են
անքնութիւնից. փորներն փրւում է:

Հիւանդի ուժերը գնալով պակասում են. երե-
սում են խիստ չրակալումներ. և մի քանի շաբաթից
յետոյ խեղճ հիւանդները սոսկալի տանջանքներից
մեռնում են ուժապատ:

Տրիխինովի ելքը ընդհանրապէս լուրջ է լինում:
Մինչև բժշկի հասնելը պէտք է անմիջապէս լուծո-
ղական ծէթ տալ: Այս հիւանդութեան ժամանակ
ահագին նշանակութիւն ունի արգելառիթ միջոց-
ների ժեռնարկելը:

ինչպէս արդէն հիւանդութեան ծագումից
երեսում է, հարկաւոր է խողախոռները մաքուր
պահել, ամենախիստ հակողութիւն ունենալ ծախու
մսի վրայ, և ընդհանրապէս հեռու մնալ հում կամ
կիսեփ միս ուտելուց:

Միակ ճիշտ միջոցը արիստիններով չվարակւելու
դէմ բոլոր մորթած խողերի միսը կանոնաւոր և
խնամքոտ մանրագէտալին քննութեան ենթարկեն է:



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՑ
ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԽԵԱԼ ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀՐԱՄԱՆԱԿՈՒ-
ԹԻՒՆԵՐԸ.

1. Բեօրնաօն՝ կազմեց Ե. Թոփչեան	10 կ.
2. Մահմեդ՝ » » »	7 »
3. Մեսրոպ Մաշտաց՝ կազմեց Ե. Թ.	5 »
4. Սահակ Պարթև՝ » »	5 »
5. Հառուպտման՝ » »	15 »
6. Մեծն Ներսէս՝ » »	5 »
7. Զրադաշտ կազմեց Մ. Թամամշեան	7 »
8. Ընտրութիւն կաթնատուների (26 պատկ.)	
9. Մեծատուրեանի	15 »

ՃՌԱՄՈՒ ԼՐՋՄ Է ՄԻԱՆԵԼՈՒ՝

ՊՈՒՇԿԻՆ.

Պատրաստ է տպագրութեան համար՝
Ա. Քալանթար. — Հանրամատչելի ձեռնարկ կաթ-
նատնուեսութեան:

Պատրաստում են նոր հրատարակութիւններ:



ԴԻՄԵԼ

- 1) С.-Петербург: Ա. Խ. Թրամանց Ալ-
եկայ 38.
- 2) Магнитогорск: Книжный магазин Гуттен-
берга.
- 3) Баку: Մ-օ „Քրօնեմեյս“. Քրանօնօ-
չայ ճ. Ալիքաբաևա.

«Պուշկինաց Արագատիպ», Ա.-Դեմուրբուրդ, 1 հարուստ փ. տ. 4
«Պուշկինաց Արագատիպ», Ա.-Դեմուրբուրդ, 1 հարուստ փ. տ. 4



ԲՓ. Ա. ԲՈՒԺԴԱԽՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի դալը (սպառ.)	5 4.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Խնչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Խնչ է ժուժկալութիւնը	5 »
6. Խնչ է անառակութիւնը	5 »
7. Վեներական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն	2 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մլջ	10 »
12. Գեղձախտ (զօլոտուխտա)	10 »
13. Ովկ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառու զրոյցներ	15 »
17. Մարմամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուեր նորատի կանանց	20 »
19. Կինը և աղամարդը	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Խնչ է կացու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	15 »
23. Առողջ ու հիւանդ երիտասարդուն	20 »
24. Ուզեղի սիֆիլիսը (զլիի և ողնաշարի)	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »
26. Քուն և երազ (մի պատկերով).	25 »
(Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10 »
27. Գործարան թէ երկարդործութիւն	15 »
28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն	20 »
29. Մտերմական խորհուրդներ պատանիներին	20 »
30. Գոյութեան կոիւ	20 »
31. Բուղովք Վիրիսով) »

Դ ի Մ Ե Լ ։ Թիֆլիս Կենդրոնական և Գուատենբերգ,
Բաքու Պրոմեթէոս զրախանութներին.

Պահեստը գանւում է Պետերբուրգ,
«Պաշկինեան տպարան», Լեշառկով փողոց, 4.